Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 2 (343) 17-31 հունվար, 2014թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Մեր ընտրությունը մեծ չէ

Ադրբեջանական դիվերսիայի վերջին իրադարձություններն ամբողջությամբ տեղավորվում են Ադրբեջանի ապակառուցողական քաղաքականության կուրսի շրջանակներում: Վերջինիս սադրիչ գործողությունները հատկապես Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների հանդիպման նախաշեմին խոսում են Ադրբեջանի՝ բանակցային գործընթացն ամեն կերպ տապալելու եւ նոր իրադրություն ստեղծելու մասին: Սակայն ամբողջությամբ պարզ չէ, թե ինչ է ենթադրում այդ նոր իրադրությունը:

Մեկ բան պարզ է. եթե պետք է փոփոխություն մտցնել բանակցային գործընթացում, իսկ դա պետք է, որ մտցվի, ապա դա բանակցություններում ԼՂՀ անմիջական եւ պաշտոնական մասնակցությունն է:

Տեղի ունեցած վերջին իրադարձությունները ղարաբաղա-ադրբեջանական սահմանին գրեթե աննկատ մնացին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների համար: Համենայնդեպս իրավիճակի գնահատական եւ դրանից բխող որեւէ հետեւություն չեղավ:

Վաղուց ժամանակն է նաեւ, որ հայկական կողմը լոկ չապավինի համանախագահների եւ կամ այլոց գնահատականներին եւ «դատապարտումներին»: Ավելի քան ճանաչելով հակառակորդ կողմի յուրաքանչյուր դրսեւորումներն ու ակնկալիքները, հայկական կողմը պետք է վարի նախաձեռնողական քաղաքականություն:

Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հարցը պետք է դառնա Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնական օրակարգային ուղղությունը:

Ադրբեջանը պարտավորված պիտի լինի գործ ունենա միջազգային նոր սուբյեկտի՝ քաղաքակիրթ աշխարհի կողմից ճանաչված եւ ընդունված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը եւ նրա առկայությունը որպես այդպիսին ենթադրեց պատերազմական գործողությունների կասեցում, զինադադար եւ կանխեց մի նոր ցեղասպանություն՝ պայմանավորված վերջինիս կարեւոր գործոնով: Պայքարի տրամաբանական շարունակությունը հայկական կողմի համար Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումն է, ինչն էլ իր հերթին ենթադրում է տարածաշրջանում՝ Անդրկովկասում, կայուն խաղաղության հաստատում:

Կարեւոր է, որ հենց այս շեշտադրումը դառնա միջազգային հանրության եւ բոլոր շահագրգիռ կողմերի ուշադրության առանցքը:

Ադրբեջանի նախագահը վերջերս հնչեցրած իր ելույթներում հաճախակի է անդրադառնում «Արեւմտյան Ադրբեջանի պատմական հողերի մասին, եւ դրանով պարզ է դառնում Ադրբեջանի ներկայիս իշանության հիվանդ նկրտումները կապված հայկական կողմի եւ նրա հետ կառուցվելիք հարաբերությունների շուրջ:

Մեզ համար մեկ բան եւս պարզ է՝ Ադրբեջանը փորձելու է վերսկսել պատերազմական գործողությունները, երբ որ պատրաստ լինի դրան: Իսկ սահմանին տեղի ունեցած վերջին իրադարձությունները համենայնդեպս ավելին մտածելու տեղիք տվեց ադրբեջանական կողմին:

Իսկ մեզ մեծ ընտրություն չի մնում՝ պետք է օր օրի զորացնել հայկական պետությունն եւ հայկական բանակը: Սա է, թերեւս, իրավիճակի փրկության միակ բանաձեւը:

Մենք անզիջում կլինենք մեր ազգային շահերի պաշտպանության գործում

ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտեի հայտարարությունը

2013թ. դեկտեմբերի 17-ին Մարդու Իրավունքների Եվրոպական դատարանը իր անարդար վճռով արդարացրել է մարդու դեմ ոճրագործության իրականացման հերքումը: Փաստորեն անմեղսունակ է ճանաչվել մի հանցագործ, որը հերքում է մարդկության դեմ կատարված ոճրագործությունը, դա անվանելով «միջազգային սուտ», իսկ դրա վտանգը կրկնապատկում է այն հանգամանքը, որ այս կեցվածքը միտում ունի դառնալ նախադեպ եւ առիթ ստեղծել նոր ոճրագործությունների ընդդեմ բոլորիս՝ համայն մարդկության:

Արցախը դիմակայել է Թուրքիայի կողմից սկսված եւ Ադրբեջանի միջոցով շարունակվող ցեղասպանությանը: Ադրբեջանը դեռեւս 1920-ական թվականներին պետականորեն ծրագրված ցեղասպանություն է իրականացրել ոչ միայն Արցախում, հատկապես Կուր գետի արեւելյան հատվածում, այլ նաեւ Նախիջեւանում: Վկան ամայացված բնակավայրերն ու ոչնչացված հարյուրավոր հայկական խաչքարերն են:

Մեր խորին համոզմամբ՝ Ադրբեջանին այս սանձարձակությունների մղողը ժամանակին Թուրքիայի կատարած ցեղասպանության չդատապարտելն է, հատուցում չպահանջելը եւ, վերջին հաշվով, միջազգային հանրության կողմից այդ անմարդկային եւ վայրագ քաղաքականության շարունակության փաստացի հովանավորումը: Մեր ժողովրդի համառ եւ վճռական պայքարի շնորհիվ մեր հայրերի, ընկերների, զավակների արյան գնով մենք կանխեցինք ցեղասպանության նոր ալիքը եւ կերտեցինք մեր Ազատ ու Անկախ երկիրը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Մեր համոզմամբ՝ Եվրոպական դատարանի այս որոշումը նախ եւ առաջ հարցականի տակ է առնում Շվեյցարիայի արդարամիտ օրենսդրությունը, որը քրեորեն պատժելի արարք է համարում մարդկության դեմ ոճիրները, ներառյալ Հայոց Ցեղասպանության ժխտումը:

Մարդու Իրավունքների Եվրոպական դատարանի վճռի անփոփոխ մնալը մեծ հարված է հայ ժողովրդի իրավունքների վերականգնման գործին, այդ թվում՝ Հայոց Ցեղասպանության ճանաչման միջազգային ճիգերին:

Բարձր ատյանների հակամարդկային որոշումները ծնում են նոր ոճրագործություններ: Դրա վկայությունն է վերջին օրերին ղարաբաղա-ադրբեջանական սահմանում ադրբեջանական կողմի ագրեսիվ քայլերը, որոնց հետեւանքով նորից թափվեց անմեղ արյուն: Մենք անզիջում կլինենք մեր ազգային շահերի պաշտպանության գործում:

ՀՅԴ Արցախի Կենտոնական կոմիտե

Լոս Անջելեսը ճանաչել է Արցախի անկախությունը

Միացյալ Նահանգների հայ համայնքի ներկայացուցիչների եւ ՀՅԴ Հայ Դատի աշխատանքների շնորհիվ ԱՄՆ-ում սկսված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչմանը սատարող բանաձեւերի շարքը հաճախակի են համալրվում:

Կարդացեք 2-րդ էջում

Հերոսի մեծարում Ստեփանակերտում

Հունվարի 22-ի կեսօրին Ստեփանակերտի Սուրբ Հակոբ եկեղեցու բակը մարդաշատ էր: Մի քանի հազար մարդ հանաքվել էին հունվարի 19-ին Ղարաբաղա-ադրբեջանական սահմանին ադրբեջանական զինուժի իրականացրած դիվերսիոն հարձակման հետեւանքով զոհված կրտսեր սերժանտ Արմեն Հովհաննիսյանի հիշատակը հարգելու համար կազմակերպված հոգեհանգստի արարողությանը եւ մոմավառությանը:

Կարդացեք 7-րդ էջում

Լոս Անջելեսը ճանաչել է Արցախի անկախությունը

Միացյալ Նահանգների հայ համայնքի ներկայացուցիչների եւ ՀՅԴ Հայ Դատի աշխատանքների շնորհիվ ԱՄՆ-ում սկսված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչմանը սատարող բանաձեւերի շարքը հաճախակի են համալրվում:

ԱՄՆ-ի ամենախոշոր քաղաքներից մեկի ներկայացուցչական մարմինը՝ Լոս Անջելեսի քաղաքային խորհուրդը միաձայն բանաձեւ է ընդունել, որի համաձայն՝ խորհուրդը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ որպես անկախ եւ ինքնիշխան պետություն:

Բանաձեւում նաեւ կոչ է արվում միջազգային հանրությանը՝ ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ որպես ազատ, անկախ եւ ինքնիշխան պետություն՝ միաժամանակ նշելով, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նպաստում է Կովկասի տարածաշրջանի կայունությանը՝ անցկացնելով ազատ եւ արդար ընտրություններ:

Լոս Անջելեսի քաղաքային խորհուրդն իր ընդունած բանաձեւում հիշատակում է նաեւ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման համար մղված պայքարը, որը ոգեշնչեց նաեւ տարածաշրջանի շատ ժողովուրդների: Բանաձեւի հեղինակն է Լոս Անջելեսի խորհրդի հայազգի անդամ Պոլ Գրիգորյանը:

Հիշեցնենք, որ Արցախի Հանրապետության ճանաչման մասին բանաձեւեր են ընդունել նաեւ ԱՄՆ Ռոդ Այլենդ, Մասաչուսեթս, Մեյն, Լուիզիանա, Մերիլենդ նահանգները, Ֆրեզնո քաղաքը եւ այլն:

Ստորեւ ներկայացնում ենք բանաձեւի ոչ պաշտոնական թարգմանությունը

ԲԱՆԱՁԵՎ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ մեզ համար պատվաբեր է ճանաչել անկախ եւ ինքնիշխան Արցախի Հանրպետության կենսունակությունը, ինչպես նաեւ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ Արցախի Հանրապետությունը հազարամյակների փառահեղ պատմություն ունի եւ իր նվիրական տեղն է զբաղեցնում հայ ժողովրդի պատմության եւ մշակույթի մեջ, ինչպես նաեւ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ Արցախի Հանրապետությունն իր անկախությունը հռչակեց 1991 թ. դեկտեմբերի 10-ին՝ երկար պայքարից հետո, որը որոշակի առումներով շարունակվում է ցայսօր, եւ նրա ինքնորոշման տեւական պահանջը ոգեշնչեց տարածաշրջանում ապրող բազմաթիվ ժողովուրդների եւ նախկին Խորհրդային Միության փլուզման խթաններից մեկը հանդիսացավ, ինչպես նաեւ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ վերջին երկու տասնամյակների ընթացքում Արցախի Հանրապետության ժողովուրդը հաստատակամություն եւ տոկունություն ցուցաբերեց պատերազմի, կոտորածների, տնտեսական զրկանքների եւ այլ հսկայական դժվարությունների հանդեպ, ինչպես նաեւ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ Արցախի Հանրապետությունն ավելի քան քսան տարի արդար եւ հավատարիմ է մնում իր քաղաքացիներին՝ պահպանելով իր անկախությունը, եւ, միաժամանակ, ջանքեր է գործադրում՝ փոփոխելու եւ կայունացնելու Կովկասյան տարածաշրջանը եւ անցկացնում է ազատ ու անկախ ընտրություններ եւ հանրաքվեներ, որոնք համընդհանուր կերպով ճանաչվել են օրինակելի տարածաշրջանի համար, ինչպես նաեւ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ 2012 թ. ապրիլի 24-ին Լոս Անջելեսը բարեկամական հարաբերություններ է հաստատել Արցախի Հանրապետության Շուշի քաղաքի հետ,

ԱՅՆՈՒՀԵՏԵՎ ՈՐՈՇԵՑԻՆՔ, որ այս բանաձեւի ընդունմամբ Լոս Անջելեսն իր հարգանքն է արտահայտում Արցախի Հանրապետության ու նրա քաղաքացիների հանդեպ եւ արժանին է մատուցում Արցախի Հանրապետության ժողովրդի կողմից ծայրահեղ դժվարությունների նկատմամբ ցուցաբերված զոհողություններին, նվիրվածությանն ու վճռականությանը, ինչպես նաեւ

ԱՅՆՈՒՀԵՏԵՎ ՈՐՈՇԵՑԻՆՔ, որ Լոս Անջելեսը մաղթում է Արցախի Հանրապետությանն ու նրա քաղաքացիներին խաղաղություն, բարգավաճում եւ շարունակական հաջողություններ ու կոչ է անում միջազգային հանրությանը՝ ըստ արժանվույն ճանաչել Արցախի Հանրապետությունը՝ որպես ազատ, անկախ եւ ինքնիշխան պետություն:

«ԱՊԱՌԱԺ»

Հոգեկան խանգարում ունեցող գաղափարները պետք է ժամանակին կասեցվեն. Դավիթ Բաբայան

Ադրբեջանի նախագահը Գանձայում հայտարարություն է արել, որտեղ մասնավորապես ասված է. «Հայաստանն իրոք Ադրբեջանի պատմական հողն է, ուր մենք ապագայում կվերադառնանք: Երիտասարդությունը, երեխաները պետք է ապրեն մեր պատմական հողերի վերադարձի գաղափարով՝ ներառյալ Հայաստանը: Ես այդ մասին բազմիցս ասել եմ եւ մեկ անգամ եւս ուզում եմ ասել. ապագայում ադրբեջանցիները պետք է վերադառնան մեր բոլոր պատմական հողերը, որոնք չեն սահմանափակվում Լեռնային Ղարաբաղով եւ դրա հարակից տարածքներով: 19-րդ դարի ոչ այնքան վաղ պատմությունում նշվում է ընդարձակ տարածքը, որտեղ ապրել են ադրբեջանցիներ»:

ԼՂՀ նախագահի տեղեկատվության գլխավոր վարչության պետ Դավիթ Բաբայանը հավաստիացրեց, որ նման հայտարարությունները շատ կարեւոր են, քանի որ դրանք ցույց են տալիս հարեւան պետության խորքային ձգտումները եւ վերջնանպատակները. «Ադրբեջանի ղեկավարը նման հայտարարություններ անելիս փաստորեն մեզ համար կարեւոր մի բան է անում, քանի որ դրանով իսկ մեզ ցույց է տալիս, թե որն է իր նպատակը: Այս իրավիճակում մենք երբեք չպետք է մեզ իլուզիաներով խաբենք: Մենք գործ ունենք մի պետության հետ, որը պատրաստ է եւ ձգտում է, որպեսզի վերացնի ոչ միայն մեր անկախ պետականությունը, այլ նաեւ բնաջնջի մեր ժողովրդին իր պատմական հայրենիքում»: Դավիթ Բաբայանի հավաստմամբ՝ նման հայտարարություններից հետո մենք պետք է ավելի զգոն լինենք եւ հասկանանք, որ ներկա դրությամբ արցախյան հիմնախնդիրը հայ ժողովրդի եւ հայոց պետականության ապագայի հարցն է. «Հարեւան Ադրբեջանը միայն Արցախով չի բավարարվելու: Մենք նախ պետք է հստակ պատկերացնենք, թե ինչ է ուզում հարեւան պետությունը, եւ ընդունենք մի իրողություն, որ տեսանելի ապագայում մենք պետք է կառուցենք մեր պետությունն ու հզորացնենք մեր բանակը, քանի որ նման ագրեսիվ մտածելակերպը դժբախտաբար տարածում է գտնում մյուս հարեւանի՝ Թուրքիայի մոտ: Եվ, որպեսզի մենք չլինենք երկու թշնամական ուժերի մեջտեղում, պետք է լինենք ուժեղ: Այսպիսի հայտարարություններն ուղղված են ոչ միայն Հայաստանի եւ Արցախի դեմ: Այս հայտարարություններն ուղղված են նաեւ Իրանին, Վրաստանին, Ռուսաստանին, քանի որ Ադրբեջանի եւ Թուրքիայի նկրտումները չեն սահմանափակվում միայն Հայաստանով եւ Արցախով: Նրանք տարածքային հավակնություններ ունեն Իրանի հանդեպ, Ռուսաստանի, Դաղստանի, Վրաստանի հանդեպ: Եւ ընդհանրապես նրանք չեն բավարարվում: Նրանց պետք է նաեւ Կենտրոնական Ասիան, Վոլգայի շրջանները, Յակուտիան,- նշեց Դավիթ Բաբայանը եւ հավելեց,- չեմ կարծում, թե նման մոտեցումը կարող է ընդունելի լինել Արեւմուտքի համար, քանի որ պանթուրքական կայսրության ստեղծումը միանշանակ ուղղված կլինի նաեւ արեւմուտքին, իսկ սա հղի է անկանխատեսելի հետեւանքներով: Եւ այս իրավիճակում նման հայտարարությունների ներքո մենք հասկանում ենք, որ Հայոց պետականության գործոնը կտրականապես բարձրանում է տարածաշրջանում, քանի որ այս ագրեսիվ ավյունի սառեցման լավագույն տարբերակը մենք ենք»:

Դավիթ Բաբայանի հավաստմամբ՝ միջազգային հանրությունը չի արձագանքում Ադրբեջանի նախագահի հայտարարություններին, քանի որ լուրջ չի վերաբերվում դրանց. «Միջազգային հանրությունն ուղղակի լուրջ չի վերաբերվում նման հայտարարություններին: Ամենայն հավանականությամբ՝ նրանք կարծում են, որ Ալիեւը պարզապես խոսում է, ինչը կարող է նա անել: Միջազգային հանրությունը երեւի կարծում է, որ սա միայն հռետորաբանություն է եւ չի կարող այն ռեալ կյանքում իրականություն դառնալ: Իրականում Ադրբեջանը մեկ շաբաթվա ընթացքում որպես պետություն կարող է փլուզվել, եթե սկսի պատերազմական գործողություններ եւ, մանավանդ, եթե սկսի պարտվել ռազմական այդ թատերաբեմում: Դա կնշանակի, որ կարող են ոտքի կանգնել լեզգիները, ավարցիները, թալիշները, թաթերը, եւ այդ պետությունը կարող է փլուզվել: Այդ իսկ պատճառով միջազգային հանրությունը լուրջ չի վերաբերվում Ալիեւի հայտարարություններին: Սակայն չմոռանանք, որ լուրջ չէին վերաբերվում նաեւ Հիտլերին, երբ նա Վիեննայի փողոցներում գումար էր հավաքում իր ելույթների համար: Բոլորն այն ժամանակ ծիծաղում էին եւ ծաղրածուի տեղ դնում: Իսկ վերջում տեսանք, թե ինչ եղավ: Դրա համար նման հոգեկան խանգարում ունեցող գաղափարները պետք է ժամանակին կասեցվեն: Այլապես դրանք գնալով քաղցկեղի են նմանվում, սկսում են տարածվել եւ, եթե ժամանակին համապատասխան միջոցներ չեն ձեռնարկվում, շատ ուշ է լինում, այսինքն՝ այդ ժամանակ պետք է միայն արյուն թափվի այդ ամենը կասեցնելու համար: Դժբախտաբար, ես հիմա տեսնում եմ, որ լուրջ չեն վերաբերվում Ալիեւի հայտարարություններին՝ հասկանալով, թե ինչքան խոցելի է Ադրբեջանը, ինչքան խոցելի է նույն Ալիեւը, եւ մտածում են, թե ինչպես լուրջ վերաբերվել խանգարված մարդու հայտարարություններին: Սակայն կարծում եմ, որ միջազգային հանրությունը պետք է միշտ մտաբերի, որ եղել են նմանատիպ դեպքեր, իսկ այդ պասիվությունը հետագայում բերել է ճակատագրական սխալների»:

Անի ԱՋԱՏՅԱՆ

Արցախը շարունակում է մասնակցել միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին

Հունվարի 22-26-ը Արցախի Հանրապետությունը առանձին տաղավարով մասնակցել է Իսպանիայի Մադրիդ քաղաքում ընթացող «Ֆիտուր Մադրիդ-2014» միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսին: «Ավանդույթի» համաձայն՝ այս ցուցահանդեսը եւս առանց ադրբեջանական ցուցարարների միջամտության չի անցել: Ինչպես տեղեկացրեց ԼՂՀ ԿԱ զբոսաշրջության եւ պատմական միջավայրի պահպանության վարչության պետ Սերգեյ Շահվերդյանը՝ ցուցահանդեսի բացման առաջին իսկ օրը մի խումբ ադրբեջանցիներ, փաթաթված ադրբեջանական դրոշներով, փորձել են խոչընդոտել արցախյան տաղավարի աշխատանքներին: «Ճիշտ է՝ միջազգային ցուցահանդեսների ժամանակ ադրբեջանցիների նման պահելաձեւը մեզ համար նորություն չէր, սակայն սա առաջին դեպքն էր, երբ ցուցարարները փակել էին տաղավար տանող մուտքը: Նրանք մոտ մեկ ժամ, պարզելով ադրբեջանի դրոշները, փակել են ԼՂՀ տաղավարի մուտքը»,- տեղեկացրեց Ս. Շահվերդյանը: ԼՂՀ ԿԱ Զբոսաշրջության եւ պատմական միջավայրի պահպանության վարչության պետի հավաստմամբ՝ ցուցահանդեսի կազմակերպիչների կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցներ, որի արդյունքում երիտասարդ ադրբեջանցիների ցույցը կասեցվել է եւ ԼՂՀ տաղավարը շարունակել է իր աշխատանքները ցուցահանդեսում: Ս. Շահվերդյանը տեղեկացրեց նաեւ, որ ադրբեջանցի ցուցարարները, չգոհանալով ցուցահանդեսի բացման օրը իրենց ցույցի արդյունքներից, հանրության համար կազմակերպված ցուցադրությունների օրը նույնպես հակահայկական շապիկներով եւ դրոշներով ցույց են կազմակերպել: Եվ եթե առաջին անգամ ցուցարարներին հաջողվել է ցուցահանդեսի տաղավարում իրականացնել բողոքի ցույց, ապա երկրորդ անգամ, Ս. Շահվերդյանի տված տեղեկությունների համաձայն, ցուցահանդեսի կազմակերպիչները չեն թողել ադրբեջանցի երիտասարդներին մտնել ցուցասրահ: «Մենք երկրորդ ցույցը կարողացանք կանխել՝ շնորհիվ նաեւ մեր հայրենակիցների, ովքեր բնակվում են Իսպանիայում,- նշեց Ս. Շահվերդյանը եւ հավելեց,- այդ հարցում մեզ աջակցել է նաեւ Իսպանիայում Հայաստանի դեսպանությունը»: Այն, որ ադրբեջանցիները ամեն անգամ միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսների ժամանակ նման ցույցեր կազմակերպելով նպատակ են ունենում խանգարել արցախյան տաղավարի գործունեությունը՝ դա փաստ է, սակայն այլ հարց է, թե ինչքանով է դա նրանց հաջողվում: Ս.Շահվերդյանի հավաստմամբ՝ ադրբեջանցիների հակաքարոզչությունը հակառակ արդյունքն է ունենում. «Ադրբեջանցիների հակաքարոզչությունը, տաղավարի մոտ կազմակերպված ցույցերը հիմնականում օտարերկրյա զբոսաշրջիկների հետաքրքրությունն են առաջացնում Արցախի տաղավարի նկատմամբ: Օտարերկրացիները մոտենում են, հետաքրքրվում են Արցախի զբոսաշրջային հնարավորություններով. «Մենք ունեցել ենք մի տաղավար, որը շատ սիրուն էր, բայց շատ շքեղ չէր: Արցախյան տաղավարի նկատմամբ հետաքրքրությունը սովորական է լինում: Եվ հենց սկսում են տեղի ունենալ այդ անախորժությունները, կրկնապատկվում, անգամ քառապատկվում է այցելուների քանակը: Բնականաբար, սկզբում օտարերկրացիների մոտ մոտ հարց է առաջանում, թե ինչ է կատարվում: Այնուհետեւ դրան հաջորդում է՝ ինչու է կատարվում հարցը, ինչ երկրի շուրջ է այդ ամենը կատարվում: Այնուհետեւ՝ զուտ զբոսաշրջային գործունեության ոլորտն է հետաքրքրում օտարերկրացիներին, որի ժամանակ էլ մենք ներկայացնում ենք մեր երկիրը»,- նշեց Ս. Շահվերդյանը: Ըստ Ս. Շահվերդյանի՝ ադրբեջանցիների նման պահվածքը սովորական է իրենց համար, բայց այն տհաճ եւ անհարմար իրավիճակ է ստեղծում կազմակերպիչների համար. «Մեզ համար շատ սովորական է այդ երեւույթը, մենք ունենք արդեն 5 տարվա փորձ: Մեր պատվիրակության անդամներից ոմանք 8 տարվա փորձ ունեն՝ հակազդելու այդ գործողություններին: Մեզ համար ադրբեջանցիների պահվածքը խնդիր չէ, բայց նրանց գործողությունները դժվարացնում են կազմակերպիչների գործը եւ իրենք այնքան էլ ոգեւորված չեն լինում Արցախի մասնակցությամբ նմանատիպ ցուցահանդեսներին»: ԼՂՀ ԿԱ զբոսաշրջության եւ պատմական միջավայրի պահպանության վարչության պետի հավաստմամբ՝ «Ֆիտուր Մադրիդ-2014» միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսը կարեւորվում է հատկապես նրանով, որ այն տեղի է ունենցել ՄԱԿ-ի Համաշխարհային զբոսաշրջային կազմակերպության նստավայր քաղաքում: Ցուցահանդեսին այս տարի մասնակցել են 9000 զբոսաշրջային կազմակերպություններ 167 երկրից: Ի դեպ, Ադրբեջանն այս տարի չի մասնակցել Իսպանիայում կազմակերպված զբոսաշրջանային ցուցահանդեսին:

Անի ԱՂԱՏՅԱՆ

Ղարաբաղը պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգին կանցնի 2015 թվականի հունվարից

Հայաստանում վիճահարույց այդ օրենքը կասեցվեց Սահմանադրական դատարանի կողմից՝ մինչեւ 2015 թվականի հունվարի 1-ը:

Բուռն քննարկումների եւ բողոքի մեծ ալիք բարձրացրած այս օրենքի համաձայն՝ 2014թ. հունվարի 1-ից սկսած 1974թ. հունվարի 1-ից հետո ծնված անձինք կստանան մոտ 5-10% պակաս աշխատավարձ: Այս գումարները պարտադիր կերպով կգանձվեն աշխատավարձերից, կփոխանցվեն կուտակային ֆոնդերին եւ որոշակի հավելումներով տարիներ անց կտրամադրվեն որպես կենսաթոշակ:

Մինչդեռ, Արցախում այդ համակարգի ներդրումը մեկ տարով հետաձգելը որեւէ առնչություն չունի ՀՀ-ում կատարվող գործընթացների հետ,- այս մասին «Ապառաժ»-ի հետ զրույցում հայտարարեց ԼՂՀ ֆինանսների փոխնախարար Գրիգորի Մարտիրոսյանը՝ հավելելով, որ պարտադիր կուտակային կենսաթոշակների համակարգի հետ կապված իշխանությունների որոշումը չի վերանայվել:

Հիշեցնեմ՝ ԼՂՀ կառավարությունը այդ պարտադիր բաղադրիչով համակարգը հետաձգելու որոշումը կայացրեց դեռեւս հայաստանյան լայնածավալ բողոքի ակցիաներից առաջ: Սակայն մեր զրուցակիցը չի թաքցնում, որ ԼՂՀ կառավարությունը հաստատակամ է այդ համակարգին անցնելու հարցում:

«Մինչեւ 2015թվական հետաձգելը կապված է մի շարք նախապատրաստական աշխատանքների՝ թե՛ օրենսդրական, թե՛ տեղեկատվական տեխնոլոգիաների, թե՛ ենթակառուցվածքների, թե՛ հանրային իրազեկման հետ: Այս բոլոր ուղղություններով պետք է համապատասխան աշխատանքներ իրականացվեն»,- ասում է փոխնախարար Մարտիրոսյանը:

Մի երկրում, որտեղ ժողովուրդն արդեն բախվել է կուտակած գումարներ կորցնելու եւ այն ետ չստանալու հետ, մեղմ ասած, դժվար է վստահություն ակնկալել նոր համակարգից: Նախարարը փորձում է բազմակողմանիորեն, մանրամասն բացատրություններով վստահեցնել, որ համակարգն իրեն կարդարացնի, որ գումարներին տնօրինող ընկերությունները վստահելի են, արդար, եւ որ նրանք «առաջին հերթին եկամուտ ստանալ են հետապնդում»:

«Ընտրված կառավարիչների նկատմամբ պահանջները շատ խիստ են, կան հակազդելու մեխանիզմներ, ժամանակ է պետք այս համակարգն աշխատացնելու, որից հետո մի շարք հարցերի պատասխաններ պարզ կլինեն»,- ավելացնում է նախարարը:

ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության անդամ Կամո Մարտիրոսյանի կարծիքով՝ համակարգը ինքնին ողջունելի է, սակայն՝ ոչ ԼՂՀ-ում եւ ՀՀ-ում ու ոչ այսօր, երբ ժողովրդի սոցիալական վիճակը, մեղմ ասած, բարվոք չէ:

Առանձնացնելով մի քանի պատճառներ, պատգամավորը նախ կանգ առավ «պարտադիր» բաղադրիչին՝ ընդգծելով, որ այն ինքնին սահմանադրական խախտում է: «Երաշխիքներ չկան, թե ինչպես այդ կառավարիչները կտնօրինեն մեր գումարները: Պետությունը հանդես է գալիս որպես երաշխավոր, սակայն այստեղ արդեն վստահության հարցն է առաջ գալիս, թե որքանով ենք մենք վստահում ներկա իշխանություններին»,- նշում է պատգամավորը:

Արցախում կենսաթոշակային բարեփոխումների մասին խոսակցությունները հասարակության շրջանում գրեթե աննկատ արձագանք ունեցան: Լայնածավալ քննարկումներ, որպես այդպիսին, տեղի չունեցան: Մինչդեռ, համակարգին քիչ թե շատ ծանոթները միաձայն քննադատում են այն:

«Բոլորս էլ արժանապատիվ ծերության ենք ձգտում: Բայց այսօր պահել մեր՝ առանց այդ էլ ցածր աշխատավարձերի հինգ տոկոսը, մեղմ ասած, համակերպվել հնարավոր չէ»,- ասում է մանկավարժ Վահրամ Ավանեսյանը»:

«Ես ընդամենը 50 000 աշխատավարձ եմ ստանում եւ 5%-ը իմ համար անշուշտ էական է: Բարձր աշխատավարձի դեպքում, իհարկե, այս համակարգին անցնելն ընդունելի կլինի: Սակայն Արցախում քիչ երիտասարդներ են այսօր միջին կամ բարձր աշխատավարձ ստանում»,- ասում է Մանուշակ Թեւոսյանը:

Արցախի ՀՅԴ ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանի կարծիքով՝ համակարգը հղի է վտանգներով, եւ՝ որ այն կարող է սոցիալական մեծ պայթյուն առաջացնել:

«Պարտադիր կուտակային համակարգի օրենքը Արցախում ՀՀ համանուն օրենքի շարունակությունն է: ՀՀ իշխանությունները հաշվի չեն առել մեր երկրի սոցիալ-տնտեսական վիճակը եւ ընդհանուր տրամադրվածությունը, եւ սա նաեւ պարտադրանք է դարձել ԼՂՀ խորհրդարանի եւ պետության համար: Աշխարհի տարբեր երկրների փորձը մեզ չի տվել այն վստահությունը, որ այս համակարգը կարող է արդյունավետ լինել ՀՀ-ում եւ ԼՂՀ-ում»,- հավելում է Իշխանյանը:

Հ.Գ: Մեր զրույցի օրը փոխնախարարն ի դեպ վստահություն էր հայտնում, որ ՀՀ-ում կուտակայինի ներդրման համակարգը չի ձախողվի:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Իրական խոնարհ հերոսը



Արցախի հերոս Պետրոս Ղեւոնդյանը (Պետո) այսօր կդառնար 50 տարեկան: ԼՂՀ գումարտակներից մեկում, որի հիմնադիրներից էր Պետոն, նշել են նրա ծննդյան տարեդարձը: Գումարտակը Արցախում ՀՅԴ առաջին վաշտն էր: Վաշտի կորիզի վրա ստեղծվեց գումարտակ, որի փոխհրամանատարն էր Պետոն:

Հերոսի հուշարձանին ծաղկեպսակ դնելուց հետո զորամասի հրամանատար Կարեն Ջալավյանը, դիմելով ներկաներին, նշեց, որ նման հերոսների մասին միայն ներկայով է պետք խոսել, քանի որ նրանց գործը եւ հիշատակը անմահ է:

«Այսօր օդի ջերմաստիճանը մի քիչ իջել է, եւ ոմանք հնարավոր է մրսում են, սակայն ուղիղ 20 տարի առաջ հակառակորդը երկրորդ անգամ տիրացել էր Օմարին, եւ այդ բքաշունչ օրերին 3500 մետր բարձրության վրա Պետոն եւ իր զինակիցները, որոնք ձեր տարիքին էին, ձեզնից փոքր, չէին ընկրկում եւ հակառակորդին ստիպում էին ծնկի գալ: Պետոյի նմանները պիտի հայ զինվորին օրինակ լինեն: Նրա նմաններին ոչինչ չէր կանգնեցնում՝ ոչ թշնամու թվային առավելությունը, ոչ բնության արհավիրքները»,- նշեց հրամանատար Կարեն Ջալավյանը:

Պետոյի զինակից Արմեն Մանուկյանը 16 տարեկանից առայսօր ծառայում է այս գումարտակում: Այսօր նա արդեն կապի դասակի հրանատար է: Պետոյին անվանում է ե՛ւ իր ուսուցիչը, ե՛ւ հայրը, ե՛ւ ավագ եղբայրը, ե՛ւ ընկերը:

«Բոլորը թերահավատորեն էին մոտենում 16-ամյա տղային, որը պնդում էր, որ կապից բան է հասկանում եւ կարող է ռազմի դաշտում օգտակար լինել, բայց ոչ Պետոն: Նա հատուկ շնորհ ուներ մարդկանց կարողությունները տեսնելու, հասկանալու զինվորին: Երբ առաջին անգամ վաշտ եկա, նախ խորաթափանց հայացքով նայեց, ապա մի քանի հարց տվեց, որից հետո հրամայեց անցնել գործի: Մեծից փոքր հարգում եւ վստահում էին նրան. հավատում էինք՝ եթե նա մեզ հետ է, կհաղթենք, անպարտ ենք: Տարբեր մասնագիտությամբ մարդիկ կային վաշտի կազմում՝ բանվոր, պրոֆեսոր, որոնց համար պատիվ էր նրա հրամանատարության ներքո գտնվելը, հրամաններին ենթարկվելը, որոնք միմիայն հայերենով էին հնչում,- պատմում է Արմեն Մանուկյանը:

Արմեն Մանուկյանը պատմում է, որ գիշերները հաճախ էր Պետոն գնում ստուգելու դիրքերը: Ստուգումներից մեկի ժամանակ տեսավ, որ ինքը ձմեռային բաճկոն չունի, իր բաճկոնը հանեց եւ տվեց: Արմենն առայսօր այդ բաճկոնը պահում է՝ որպես հուշ:

«Ստուգումներից մեկի ժամանակ հետը քարտեզ էր բերել, բացեց այն եւ ձեռքով ցույց տվեց այն տարածքները, որ դեռ պետք է ազատագրենք: Հավատում էր, որ Արցախը պայքարի սկիզբն է,- հիշում է Արմենը:

Զորամասում կազմակերպված միջոցառմանը ներկա էին նաեւ Առաջաձորի միջնակարգ դպրոցի սաները: Նրանք եկել էին ուխտելու, որ շարունակողն են Պետոյի սկսած գործի:

Զորամասի սերժանտական խորհուրդը դիմել է զորամասի հրամանատարությանը՝ միջնորդելու, որպեսզի զորամասը անվանակոչվի Պետրոս Ղեւոնդյանի անվամբ:

1964 թվականի հունվարի 30-ին ծնված, ԵՊՀ ռադիոֆիզիկայի ուսանող Պետոն մարտի դաշտում շատ արագ դարձավ մայոր Պետրոս Ղեւոնդյան, ընտրվեց Շուշիի առանձնակի գումարտակի փոխհրամանատար: Ոչ միայն մշակեց Օմարի լեռնացքի գրավման դժվարին ծրագիրը, այլեւ իր գումարտակով, առանց զոհ տալու իրականացրեց այն: Իր հրամանատարությամբ գործող գումարտակի հետ նա մասնակցել է Շահումյանի, Մարտակերտի, Մարտունու եւ Հադրութի շրջանների տասնյակ բնակավայրերի ազատագրման մարտերին, Քելբաջարի թշնամական հենակետերի ոչնչացման ռազմագործողությանը՝ բազմիցս ցուցաբերելով խիզախություն ու հերոսություն:

Շահումյանի շրջանում անցկացրած հենց առաջին իսկ օրերից Պետոն աչքի էր ընկնում մարդկանց հետ աշխատելու իր բացառիկ վարվեցողությամբ, մարդկանց հասկանալու կարողությամբ:

1991թ. ապրիլի 18-ին պառոշյանցիների խումբն ուղղաթիռով Շահումյանից մեկնում է Գետաշեն ու տեղ հասնելուն պես Պետոն ու իր ընկեր Կարոտը անմիջապես ներկայանում են Թաթուլ Կրպեյանին՝ քննարկելու իրենց ջոկատի հետագա անելիքների մանրամասները: Դա Թաթուլի, Պետոյի եւ Կարոտի առաջին եւ, ցավոք, վերջին հանդիպումն էր:

Մալիբեյլիի գրավման ժամանակ, գրոհը սկսվելուց վայրկյաններ անց Պետոն ջոկատի կազմում վիրավորվում է ուսից:

Մահը բազմիցս անցել է Պետոյի կողքով, սակայն նա Ղարաբաղի ամենաօրհասական օրերին, անգամ Գետաշենի, Մարտունաշենի ողբերգական անցքերից հետո երբեք չկորցրեց հավատը առ հաղթանակ. նրա դավանանքը միայն հաղթանակն էր: Անգամ Շահումյանի դեպքերի ողբերգական ընթացքն ու իր մարտական ընկեր-հրամանատար Կարոտի անհետանալու վիշտը չխանգարեցին, որպեսզի նա կորցներ իր վճռականությունն ու անսասան ոգին:

1994 թվական. փետրվարի 14.

Թուրքական ուժերը ղարաբաղյան զորամիավորումների հարվածներից մազապուրծ՝ լքում են իրենց դիրքերը:

Լեռնալանջերին դիրքավորված մարտիկներին անհրաժեշտ էր ժամանակին ապահովել սննդով ու տաք հագուստով: Թիկունքն առաջավոր դիրքին կապող ասֆալտապատ միակ ճանապարհը, որն անցնում է Յանշաղ եւ Ղամիշլի գյուղերով, ձյան պատճառով տեղ-տեղ դեռեւս խցանված էր: Անհրաժեշտ էր բացել այդ ճանապարհը եւ ժամանակին լուծել դիրքերում ամրացված զինվորների մատակարարման խնդիրները: Պետոն այդ նպատակով Յանշաղից իջնում է Ղամիշլի, ապա շարժվում դեպի Գյանջա-Քյալբաջար ճանապարհահատվածի խաչմերուկի ուղղությամբ: Գյանջա տանող ճանապարհին, խաչմերուկից 6-7 կմ հեռավորության վրա հանդիպում է շտապ օգնության մեքենայի եւ նրա շուրջը խմբված զինվորների պատմածներից տեղեկանում, որ նրանց հանձնարարված է մարտադաշտից դուրս բերել ԼՂՀ բանակի՝ այնտեղ մնացած վիրավոր զինվորներից մեկին: Բայց քանի որ ճանապարհը թուրքերի կողմից ականապատված էր, շտապ օգնության մեքենայի սպասարկող անձնակազմը, երկյուղելով ողբերգական հետեւանքներից, չէր համարձակվում առաջ շարժվել, իսկ մարտադաշտում նրանց օգնությանն էր սպասում վիրավոր զինվորը:

Պետոն, չնայած սպառնացող ստույգ վտանգին, չէր կարող անտարբեր լինել զինակիցներից օգնություն հայցող, մարտադաշտում միայնակ մնացած մարտիկի նկատմամբ: Նա վարորդի փոխարեն անվարան նստում է շտապ օգնության մեքենայի ղեկին եւ միայնակ շտապում վայրկյան առաջ մարտադաշտից դուրս բերել վիրավոր մարտիկին:

Մի քանի ակնթարթ անց լսվում է պայթյունը եւ, ականի բեկորներից խոցված, Պետոն կնքում է իր մահկանացուն:

1996 թ.՝ հետմահու պարգեւատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ« շքանշանով: Նույն թվականին պարգեւատրվել է ՀՀ «Արիության» մեդալով, ավելի ուշ ստացել է «Ոսկե արծիվ» շքանշան՝ արժանանալով «Արցախի հերոս» կոչմանը:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Քարինտակի հերոսամարտից անցել են 22 տարիներ

Քարինտակցիների հետ այդ նշանակալից օրը նշելու համար գյուղ էին այցելել պաշտոնատար անձինք, բարձրաստիճան սպաներ, Քարինտակի պաշտպանական մարտերին մասնակցած ազատամարտիկներ, ովքեր ծաղիկներ ու ծաղկեպսակներ դրեցին գյուղի 45 զոհված ազատամարտիկների հուշարձանին:

Առաջին հայացքից աննշան ու փոքրիկ այս հայկական գյուղն իսկական պատուհաս էր դարձել ազերիների համար: Ազերիները բազմաթիվ եւ ապարդյուն միջոցների էին դիմել իր սար ու քարին կառչած քարինտակցուն տեղահանելու համար: Եվ 1992թ. հունվարի 26-ին թշնամու համբերության բաժակի լցման վերջին կաթիլն է լրացել:

Քարինտակցիները այսօրվա պես հիշում են 22-ամյա վաղեմություն ունեցող այդ օրը: 1992թ. հունվարի 25-ի լույս 26-ի գիշերն անհանգիստ էր Քարինտակ գյուղում: Շուշիի սարահարթից հակառակորդն անցնում է նախադեպը չունեցող հարձակման:

Շուշիից գլորվող քարե հեղեղն ու վառվող անվադողերը ոչ թե վախեցնում եւ խուճապի են մատնում քարինտակցիներին, այլ ինքնապաշտպանական ջոկատ եւ պաշտպանական դիրքեր ստեղծելու մտահղացման պատճառ են դառնում: 1989թ. ստեղծվում է Քարինտակի ինքնապաշտպանական ջոկատը, որի հրամանատար է նշանակվում Վ. Առուշանյանը: Քարինտակցիները հիշում են, թե ինչպես գյուղում առկա որսորդական, ինքնաշեն հրացաններն ու նռնակները, գաղտնի միջոցներով ձեռք բերված ինքնաձիգները՝ մեկ անգամ չէ, որ վարպետորեն թաքցրել են գյուղը զինաթափելու միտումով ստուգայցեր կատարած խորհրդային բանակի զինվորներից, հետագայում օմոնականներից:

1992թ. հունվարի 26-ին Ադրբեջանի պաշտպանության նախարար Մեհթիեւի անմիջական ղեկավարությամբ մշակվում է մարտական գործողությունների պլան, համաձայն որի՝ հաշված ժամերի ընթացքում պլանավորվում է հայաթափել գյուղը: Հակառակորդն առանց վայրկյան կորցնելու՝ միևչեւ ատամները զինված երկու կանոնավոր գումարտակով՝ մոտ 600 զինվոր, սկսում է ռմբակոծել Քարինտակը: Ինչպես փաստում են Քարինտակի ինքնապաշտպանության

կազմակերպիչները՝ գյուղում այդ ժամանակ կար 40 ինքնաձիգ, մեկ նշանառու հրացան, մեկ գնդացիր, մեկ նռնականետ եւ որսորդական հրացաններ: Հակառակորդը հեռահար մեծ ու փոքր կրակային նախապատրաստությունից հետո գյուղի վրա ձեռնարկում է գրոհ բոլոր ուղղություններով: Օրհասական պահին Քարինտակին օգնության են հասնում Շոշի, Սղնախի, Սզնեքի, Ավետարանոցի, Կարմիր գյուղի եւ Քռասնու ջոկատները: Ջոկատները գյուղ են հասնում կեսօրից հետո, կռվում են հակառակորդի դեմ եւ տալիս են 7 զոհ: Այդ օրը Քարինտակին մեկ դասակով օգնության է հասնում նաեւ Աշոտ Բեկորը: Շուրջ 12 ժամ տեւած կենաց եւ մահու կռիվ է ընթանում: Հակառակորդը գյուղի մատուցներում թողնում է 130-ից ավելի զոհ եւ մեծ քանակությամբ զենք ու զինամթերք: Հայկական կողմը նույնպես զոհեր եւ վիրավորներ ունեցավ այդ օրը: Զոհեր եղան նաեւ խաղաղ բնակիչներից, ովքեր մինչեւ վերջ գտնվելով գյուղում՝ օգնել են մեր տղաներին:

Արցախյան ազատամարտի տարբեր ռազմագործողություններում իրենց կյանքն են զոհել 45-ից ավելի քարինտակցիներ:

1992թ. հունվարի 26-ի մարտերից հետո ազերիները Քարինտակն անվանում են «Արյունոտ ձոր»: Իսկ Արցախյան տարեգրության մեջ հունվարի 26-ը կոչվեց Քարինտակի հերոսամարտ: Քարինտակի հերոսամարտում զոհվեց գյուղի ինքնապաշտպանության ջոկատի հրամանատար, Գերագույն Խորհրդի պատգամավոր Վ. Առուշանյանը:

Մեծ է Քարինտակի ռազմաքաղաքական նշանակությունը: Այստեղ ջարդվեցին հակառակորդի հոխորտացող ուժերը, սարսափով լցվեցին Շուշիում բնավորված ազերիների սրտերը: Քարինտակը մնաց անսասան հենակետ՝ Շուշիի թշնամական որջը հարվածելու եւ 92 թվականի մայիսին պատմական Շուշին ազատագրելու համար:

- Ես շնորհակալ եմ այն ժամանակահատվածին, որի ընթացքում բախտ ունեցա հանդիպել հերոսական մարդկանց հետ, որոնց հետ պաշտպանեցինք մեր երկիրը,- Քարինտակի հերոսամարտի մասին ասել է Արկադի տեր Թադեւոսյանը (Կոմանդոս),- մենք թշնամու հետ էլ խնդիր չենք ունենա, պարզապես մեր թշնամին պետք է իմանա, թե ում հետ գործ ունի: Իսկ Քարինտակի հերոսամարտը դա ցույց տվեց: Երբ հետ ենք վերադառնում 91 թվականի դեկտեմբեր ամիսը՝ փաստում ենք մի բան. այդ ժամանակ մեր թշնամին նպատակ ուներ, որ հունվարի 1-ին իր ձեռքում կհայտնվի ոչ միայն Քարինտակը, այլեւ Ստեփանակերտը: Նրանք ունեին լուրջ ծրագիր, եւ այն մշակել էին իրենց շտաբում՝ պաշտպանության նախարարի գլխավորությամբ: Ազերիները համապատասխան զենք-զինամթերք էին ուղարկել իրենց ծրագիրն իրականացնելու համար: Հազարավոր մարդկանց դիմաց պայքարում էր մի փոքրիկ գյուղ: Քարինտակի հերոսամարտում մեր հաղթանակի հիմնական պատճառն այն էր, որ յուրաքանչյուրը գիտակցում էր, որ սա իր հողն է եւ այն պետք է պաշտպանել: Հայաստանից Քարինտակին համապատասխան օգնություն նույնպես եղել է: Բայց թշնամին պատրաստված զորք ուներ, ուներ զինտեխնիկա եւ քաջատեղյակ էր, որ գյուղում գրեթե զենք չկա. պարզապես նրանք հաշվի չէին առել, որ գյուղում կա ոգի: Քարինտակի պաշտպանությունը մենք իրականացրել ենք զինվորական բոլոր օրենքներով: Ես չեմ զարմանում՝ հաղթանակը մերը պետք է լիներ:

Հունվարի 26-ը՝ Քարինտակի հերոսամարտի օրը, վերածնդի, հպարտության ու հաղթանակների սկիզբը խորհրդանշող օր է յուրաքանչյուր քարինտակցու համար:

Ա.Ն.

Արցախում արտադրված եւ ներմուծված ապրանքներն այսուհետ խոշորացույցի տակ կլինեն

Գյուղատնտեսությունն Արցախում ունի ռազմավարական նշանակություն պարենային ապահովության հիմնախնդրի լուծման, գյուղական տարածքների զարգացման ու գյուղական բնակավայրերի ամրապնդման համար: Գյուղատնտեսությունը վճռորոշ դեր է խաղում երկրի անվտանգության, կենսագործունեության եւ տնտեսության կայունացման գործում:

Հունվարի 28-ին ԼՂՀ գյուղատնտեսության նախարար Անդրանիկ Խաչատրյանը հրավիրել էր մամուլի ասուլիս, որի ժամանակ հանգամանալից ներկայացրեց 2013 թվականին ոլորտի գործունեությունը:

Նախարարի հավաստմամբ՝ գյուղատնտեսության նախարարության 2013 թվականի գործունեությունը նպատակաուղղված է եղել հողօգտագործման ու անասնապահության արդյունքում գյուղատնտեսական արտադրանքի ծավալների ավելացմանը:

2013 թվականին գյուղատնտեսական հիմնական ծրագրերի եւ միջոցառումների իրականացման նպատակով պետբյուջեից նախարարությանը հատկացվել է շուրջ 3.0 մլրդ դրամ: Նախարարը ներկայացրեց նաեւ օպերատիվ տվյալներ.

«Ըստ օպերատիվ հաշվարկների՝ ակնկալվում է, որ 2013 թվականին գյուղատնտեսության համախառն արտադրանքը նախորդ տարվա համեմատությամբ կաճի 8-10 տոկոսով, ինչը, բնականաբար, կհանգեցնի երկրի համախառն ներքին արդյունքի մեջ գյուղատնտեսության ոլորտի տեսակարար կշռի ավելացմանը»:

Ա. Խաչատրյանի հավաստմամբ՝ հողերի բերրիության վերականգնման եւ գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման նպատակով 62.0 մլն դրամ է հատկացվել սեւ ցելի մշակության համար: Նախարարը սեւ ցելի գործընթացն արդյունավետ է համարում, քանզի սեւ ցել իրականացրած ցանքատարածքներում բերքատվությունը կրկնակի մեծ է լինում:

Գյուղնախարարը հավաստիացրեց, որ 2013 թվականին հողօգտագործողներին տրամադրվել է ավելի քան 832.0 հազար լիտր դիզելային վառելանյութ՝ 350 դրամ/լիտր կանխիկ վճարման պայմանով,

ընդ որում՝ սուբսիդավորման չափը կազմել է 150 դրամ/լիտր:

«Հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքն անկորուստ կազմակերպելու նպատակով ստեղծված հանրապետական օպերատիվ շտաբի արդյունավետ աշխատանքի արդյունքում հաջողվել է զերծ մնալ արտակարգ պատահարներից, բացառությամբ Հադրութի շրջանում գրանցված 1 դեպքի, որի հետեւանքով այրվել է 1 հա ցորենի ցանքատարածք,- նշեց գյուղնախարարը»:

Գյուղնախարարի տված տեղեկությունների համաձայն՝ հանրապետությունում ցանված հացահատիկային մշակաբույսերի 60147.1 հա տարածքներից հնձվել է 53199.8 հա ցանքատարածք, կամ ցանված տարածքների 88.4 տոկոսը՝ նախորդ տարվա 94.5 տոկոսի դիմաց: Միջին բերքատվությունը կազմել է 18.7 ց/հա, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 0.9 ց/հա-ով, հավաքվել է 99510.1 տոննա հացահատիկ, ինչը նախորդ տարվա համեմատ պակաս է ավելի քան 4350.0 տոննայով կամ 4.2 տոկոսով:

Ա. Խաչատրյանի հավաստմամբ՝ Արցախում արտադրված հացը եւ միսը լիովին բավարարում են Արցախում առկա պահանջարկը: Անգամ հացահատիկի արտահանում է իրականացվում: Տեղական արտադրության ձուն, կաթը եւ թռչնամիսը նույնպես բավարարում են Արցախում առկա պահանջարկը՝ հավաստիացրեց Ա. Խաչատրյանը:

Նախարարի գնահատմամբ՝ անասնապահության ոլորտը 2013 թվականին հաջողված է եղել: Խոշոր եւ մանր եղջերավոր անասունների գլխաքանակն աճել է: Հանրապետության շրջաններում բռնկված աֆրիկյան ժանտախտի արդյունքում նվազել է խոզերի գլխաքանակը:

Գյուղատնտեսության նախարարը տեղեկացրեց, որ 2014 թվականին հատուկ ուշադրություն է դարձվելու բանջարաբոստանային կուլտուրաների մշակությանը.

«Վերջերս վարչապետի մոտ տեղի է ունեցել խորհրդակցություն եւ 2014 թվականին առանձին ուշադրություն է դարձվելու բանջարաբոստանային կուլտուրաների մշակությանը: Իրականացվելու են արտոնյալ վարկավորումներ, տրամադրվելու են ոռոգովի տարածքներ, եւ այդ աշխատանքները հատկապես ուզում ենք ընդլայնել Արաքսի հովտում»,- նշեց Ա. Խաչատրյանը:

Ի դեպ, բոլորովին վերջերս հիմնադրվել է սննդի անվտանգության պետական ծառայություն, որը խոշորացույցի տակ է պահելու ոչ միայն Արցախում արտադրված, այլ նաեւ ներմուծված սննդամթերքը:

«2014 թվականը սննդի անվտանգության պետական ծառայության համար լինելու է ձեւավորման տարի՝ մինչեւ ձեռք կբերենք անհրաժեշտ լաբորատոր սարքավորումները: Սակայն փետրվարի 1-ից սննդի անվտանգության պետական ծառայությունը սկսելու է իր առջեւ դրված պարտականություններն իրականացնել»,- հավելեց Ա. Խաչատրյանը:

Անի ԱՇՈՏՅԱՆ

Հիմնադրամը խթանում է գյուղատնտեսության զարգացմանը

2008-2013 թվականներն ընկած ժամանակահատվածում ընդհանուր տվյալներով ԼՂՀ գյուղի եւ գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի կողմից իրականացվել է շուրջ 18 միլիարդ 110 միլիոն դրամի աջակցություն: Հիմնադրամի տնօրեն Ա. Բախշյանի տված տեղեկությունների համաձայն՝ ընդհանուր աջակցության մեջ գերակշիռ մասը՝ 74%-ը, կազմում են Հիմնադրամի կողմից տրամադրված փոխառությունները, որոնք տրամադրվել են գյուղատնտեսությամբ զբաղվող մոտ 52 իրավաբանական եւ 36 000 ֆիզիկական անձանց: 2008-2013թթ. իրականացված աջակցության 28%-ը միայն կազմում է 2013թ. իրականացված աջակցությունը: 2013թ. Հիմնադրամը տարբեր ծրագրերի շրջանակներում իրականացրել է 5 միլիարդ 101 միլիոն 262 հազար դրամի չափով աջակցություն:

Հունվարի 27-ին հրավիրած մամուլի ասուլիսի ժամանակ ԼՂՀ գյուղի եւ գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի տնօրենը հանգամանալից ներկայացրեց հիմնադրամի գործունեությունը: Հիմնադրամի տնօրենի տված տեղեկությունների համաձայն՝ 2013թ. ԼՂՀ գյուղի եւ գյուղատնտեսության աջակցության հիմնադրամն իրականացրել է ծրագրերի 5 խումբ, որոնց մեջ ներառվել են հողագործության, անասնապահության զարգացման, գյուղտեխնիկայի պարկի թարմացման ու ծառայությունների արդյունավետության բարձրացման, գյուղատնտեսական մթերքների վերամշակման, ինչպես նաեւ հիմնադրամին 100% բաժնեմասով պատկանող ընկերությունների միջոցով գյուղատնտեսական արտադրության կազմակերպման ծրագրերը: «Հիմնադրամի գործունեության գերնպատակն է հնարավորինս աջակցել հանրապետության բոլոր հողօգտագործողներին, ֆերմերներին եւ տնտեսավարող սուբյեկտներին, որոնց աշխատանքով ապահովվում է երկրի պարենային անվտանգությունը, որը եւ հանդիսանում է մեր հանրապետության տնտեսական ու ռազմական հզորության կարեւոր գրավականը»,- նշեց հիմնադրամի տնօրենը:

Ա. Բախշյանի հավաստմամբ՝ ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2013 թվականին հատուկ ուշադրություն է դարձվել ԼՂՀ ենթաշրջանների զարգացմանը: «Երկրի կայուն տնտեսական զարգացման հետագիծ ունենալու համար անհրաժեշտ է, որպեսզի տնտեսությունը հավասարակշռված բաշխում ունենա նաեւ աշխարհագրական առումով, որպեսզի հանրապետության տարբեր տարածքներ ունենան համաչափ սոցիալ-տնտեսական զարգացում: Հիմնադրամի կողմից աջակցության ծրագրերի մեջ իր առանձնահատուկ տեղն է զբաղեցնում Հադրութի շրջանի հարավային թեւի գյուղատնտեսության զարգացման «Արաքս» ծրագիրը,- նշեց հիմնադրամի տնօրենը: - Հանրապետության այս տարածքը սահմանակից է Իրանի Իսլամական Հանրապետությանը եւ Հայաստանի Հանրապետությանը, ինչն իրենից ենթադրում է, որ արտադրված մթերքների արտահանման հեռանկարներն առկա են: Իսկ դա հնարավորություն կտա զգալի եկամուտներ բերելու պետական բյուջե»: Ա. Բախշյանի հավաստմամբ՝ Արաքսի հովիտը գյուղատնտեսական մթերքների յուրահատուկ շտեմարան կարող է դառնալ Արցախի համար, որը իրականություն դարձնելու համար պետք է լիարժեքորեն օգտագործել այդ տարածաշրջանում առկա վարելահողերը:

Ա. Բախշյանը հավելեց նաեւ, որ շուրջ 27 հազար հա Հադրութի շրջանում եւ Քաշաթաղի շրջանի Թովմասարի ստորոտից մինչեւ Արաքսի հովիտն ընկած 9000 հա տարածքում պետական պահուստային ֆոնդի հողերի պոտենցիալն այսօրվա դրությամբ լիովին չի օգտագործվում:

«Հաշվի առնելով սահմանամերձ հարավային թեւի այս ռազմավարական նշանակությունը, ինչպես նաեւ՝ բարենպաստ բնակլիմայական պայմանների շնորհիվ այստեղ արդյունավետ գյուղատնտեսություն վարելու նպատակահարմարությունը, ԼՂՀ կառավարությունը 2012 թվականից սկսած զգալի միջոցներ է ձեռնարկել «Արաքս» ծրագրի իրագործման ուղղությամբ: ԼՂՀ գյուղի եւ գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի հետ կնքած պայմանագրի համաձայն՝ այս տարի Հայաստանից հրավիրված «Բերրիություն» կազմակերպությունն արդեն վերականգնել է էրոզիայից տուժած հարյուրավոր հեկտար հողեր: Մայիս ամսից սկսած նրանք այդ տարածքում ծավալուն աշխատանքներ են իրականացնում: Արդեն կատարվել են հողերի իրացման աշխատանքներ 300 հեկտարի վրա, մոտ ապագայում այն կհասցվի 1000 հեկտարի»,- նշեց հիմնադրամի տնօրենը: Ա. Բախշյանը, որպես հաջողված օրինակ, նշեց Սիրիայից Արցախ տեղափոխված Ասմարյան եղբայրների օրինակը, ովքեր Արցախում մինչեւ 1000 հա ցիտրուսային եւ մերձարեւադարձային այլ պտղատու այգիների հիմնադրման ծրագիր են կյանքի կոչում: Հիմնադրամի տնօրենը հավաստիացրեց, որ Ասմարյան եղբայրների ծրագիրն աջակցության է արժանացել կառավարության կողմից, եւ արդեն իսկ վարձակալված 1000 հա հողի վրա կատարվել են հարթեցման եւ նախապատրաստական համապատասխան աշխատանքներ: Հիմնադրամի տնօրենն առանձնացրեց Հիմնադրամի կողմից իրականացվող ուշագրավ եւ արդյունավետ ծրագրերից մեկը, դա «ԱՌԻ» ծրագիրն է, որի շրջանակներում ներառված են ԼՂՀ Քաշաթաղի եւ Շահումյանի շրջանները:

«ԱՌ»-Ի ծրագրի շրջանակներում Քաշաթաղի եւ Շահումյանի շրջանների բնակիչներն օգտվել են «Արցախ Ռութս Ինվեստմենթ Լիմիթիդ» ընկերության նպատակային փոխառությամբ տրամադրված ֆինանսական միջոցներից»,- նշեց Ա. Բախշյանը: - Հիմնադրամի եւ «Արցախ Ռութս Ինվեստմենթ Լիմիթիդ» ընկերության միջեւ համագործակցությունը սկսվել է դեռեւս 2010-ից, որն ուղղված է այդ շրջանների տնտեսական զարգացմանն ու վերաբնակեցմանը: «ԱՌԻ» ծրագրի ամենակարեւոր ու նշանակալից առանձնահատկությունն այն է, որ արտասահմանյան ներդրողների համար Արցախը դառնում է ոչ թե զուտ բարեգործության միջավայր, այլ նաեւ տնտեսականորեն գրավիչ ու բիզնեսի համար նպատակահարմար երկիր»:

ԼՂՀ Գյուղի եւ գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը գյուղտեխնիկայի ձեռքբերման, ինչպես նաեւ դրանց վերանորոգման նպատակով 2013թ. 0% տոկոսադրույքով եւ 6% տոկոսադրուքով տրամադրել է 79 միլիոն 270 հազար դրամի փոխառություններ:

Հիմնադրամի տնօրենի տված տեղեկատվության համաձայն՝ հանրապետության հողօգտագործողներին համալիր ագրոտեխնիկական ծառայություններ մատուցելու, մատուցված ծառայությունների որակը բարելավելու, մշակվող տարածքների մակերեսները ընդլայնելու, նոր մշակաբույսերի մշակությունը խթանելու եւ գյուղամերձ տարածքների մշակության աստիճանը բարձրացնելու նպատակով ստեղծվել եւ կյանքի է կոչվել մասնավոր մեքենատրակտորային կայաններ ստեղծելու ծրագիրը, որի արդյունքում 2013թ. ստեղծվել են 5 մասնավոր մեքենատրակտորային կայաններ, որից 2-ը՝ Մարտակերտի շրջանում, 1-ը՝ Ասկերանի շրջանում եւ 2-ը՝ Մարտունու շրջանում: Ա. Բախշյանի հավաստմամբ՝ ընթացքի մեջ է եւս 6 մեքենատրակտորային կայանների ստեղծման գործընթացը:

Ա. ԱՇՈՏՅԱՆ

Ազգի նվիրյալը եւ ճակատագրի նահատակը



«Երբ գիշերը գայ, մտեք ձեր հոգիի սենյակը եւ խոսեք ձեր խղճի հետ եւ ըսեք, արդյոք աշխատե՞ր էք հայ ժողովրդի համար, ինչպես Արամը, տուե՞ր էք ձեր ամբողջ կյանքը հայ ժողովրդին՝ ինչպես Արամը...»

Նիկոլ Աղբալյան

20-րդ դարի սկիզբը, հայոց պատմության ամենածանր ու դժվար, ճակատագրական պահերից մեկն է՝ թուրքական բռնատիրության կողմից արեւմտահայության բնաջնջման դեմ պայքարի եւ 500 տարվա թափառական երազի՝ հայոց պետականության վերականգնման ժամանակը:

Այս բախտորոշ պահին հանդես եկան անհատներ ու նվիրյալներ, որոնք իրենց ամբողջ կյանքը կապեցին այդ սուրբ գործին: Նրանց թվին է դասվում ազգային-ազատագրական շարժման նվիրյալ, ազգային-քաղաքական ու պետական գործիչ Արամ Մանուկյանը, որին իրավացիորեն համարում են Առաջին հանրապետության հիմնադիրը:

Արամ Մանուկյանը (Սարգիս Հարությունի Հովհաննիսյան) ծնվել է 1879 թ. մարտի 19-ին, Արցախի Շուշի քաղաքում: Արամի պատանեկությունը եւ ուսումնառությունը համընկավ հայ ազգային հասարակական-քաղաքական կյանքի ակտիվացմանը եւ թուրքական բռնատիրության դեմ պայքարին, ինչն ավելի խորացրեց ազատագրական գաղափարախոսության արմատավորումը իր ուսումնառության տարիներին, որն անցավ Շուշիի եւ Երեւանի թեմական դպրոցներում: Ժամանակի գլխավոր քաղաքական ուժը Հայ Հեղափոխական Դաշնակցությունն էր, որի դերը վճռորոշ էր նաեւ Առաջին հանրապետության հիմնադրման հարցում: Դաշնակցությունն էր փորձում ցեղասպանություն ապրած ժողովրդից նոր ուժի բռունցք ստեղծել, կանոնավոր բանակ ու պետականություն շինել, պատմականորեն բաժանված արեւմտահայ եւ արեւելահայ տարբեր կողմնորոշումների եւ շահերի արանքում հայտնված ժողովրդից միասնական շահեր ունեցող ազգ ու պետություն կերտել: Այդ կարեւոր ու կենսական գործին լծվեցին դաշնակցական գործիչները: Բացառություն չէր նաեւ Արամը: Դարասկզբին նա արդեն ընդգրկված էր կամավորական խմբերի ու զենքի փոխադրման կուսակցական գործունեությանը: 1903 թ. նա գալիս է Կարս, որը 20-րդ դարի սկզբին հանդիսանում էր Արեւմտյան Հայաստանին օգնություն ապահովող առանցքային կետերից մեկը: Արդեն այստեղ զգացվում էր նրա կազմակերպչական եւ քարոզչական մեծ ներուժը: Նա կատարում է Կարսի Կենտրոնական կոմիտեի հանձնարարականները, ապահովում կապը բնակչության հետ եւ զբաղվում քարոզչությամբ, ու գտնում էր, որ ազգային իրավունքները վերականգնելու համար պետք է ապավինել սեփական ուժերին: Արամը, որպես կայացած եւ հասուն քաղաքական ու ռազմական գործիչ, իրեն դրսեւորեց Վանի ինքնապաշտպանության ժամանակ՝ գաղտնի կերպով հրահանգելով կուսակցական ուժերին դիմագրավելու թուրքական վտանգին՝ միաժամանակ փորձելով հրապարակավ գոհացում տալ թուրքական իշխանությունների պահանջներին: Երբ արդեն պարզ դարձավ, որ ջարդերն անխուսափելի են, նա, որպես Դաշնակցության ներկայացուցիչ, այլ քաղաքական ուժերի հետ ձեռնարկեց Վանի հայության ինքնապաշտպանությունը: Ստեղծվեց Հայ ինքնապաշտպանության զինվորական մարմին, որի մեջ ընդգրկվեցին ականավոր եւ փորձառու զինվորականներ, եւ Արամը, ստանձնելով նրանց հրամանատարությունը, ղեկավարեց հայոց ինքնապաշպանությունը՝ դառնալով նրա ոգին: Այնուհետեւ դառնալով Վանի նահանգապետ, նա ցույց տվեց իր կազմակերպչական տաղանդը, ազգային-պետականաստեղծ մտածելակերպն ու անկասելի ոգին, որն իր վերջին, բայց ցայտուն դրսեւորումները ստացավ Առաջին հանրապետության տարիներին: Գիտակցելով տարածաշրջանում զարգացող ռազմաքաղաքական անցքերի հնարավոր վտանգավոր հետեւանքները հայ ժողովրդի համար՝ Արամն ուրվագծեց իրատեսական մի ուղեգիծ, ըստ որի՝ հայ ժողովրդի պաշտպանությունն ու հետագա գոյությունը հնարավոր կլինի միայն սեփական ուժերին ապավինելով: Երեւանում եւ նրա շրջակայքում տիրող համընդհանուր քաոսի ու ամենաթողության պայմաններում Արամին հաջողվեց կարճ ժամանակում ստեղծել կառավարման կուռ մեխանիզմ: Իր նպատակասլացությամբ ու շրջահայացությամբ նա կարողացավ հավասարակշռություն, հավատ ու վստահություն ստեղծել տարբեր քաղաքական ուժերի միջեւ, հետեւողականություն ցուցաբերել իր բոլոր գործերում: Նա կարողացավ ոչ միայն ներգործել ժողովրդի վրա, վերականգնել նրա բարոյալքված ու հուսահատ ոգին եւ տանել նրան դեպի հաղթություն, այլեւ կազմակերպել թիկունքը, զինամթերք, պարեն հայթայթել ու մատակարարել բանակին: Հենց այդ ոգին կայծ տվեց Սարդարապատի բախտորոշ ճակատամարտում, եւ բաղձալի հաղթանակը ծնունդ տվեց Առաջին հանրապետությանը, որի հիմանդիրն էլ իրավացիորեն համարվում է Արամ Մանուկյանը: Ցավոք, նրան վիճակված չէր երկար ապրել եւ շարունակել ազգօգուտ ու հայրենանվեր աշխատանքը: 1919 թ. հունվարի 29-ին նա մահացավ բծավոր տիֆից ու թոքախտից՝ խանձարուրում թողնելով հայոց պետականությունը:

Նրա մահից ինսունհինգ տարի հետո էլ, երբ մեր երկրի գլխին դեռ կախված է թշնամու կողմից ներխուժման վտանգը, երբ երկրում տիրում է ծանր սոցիալ-տնտեսական վիճակ եւ արտագաղթ, Արամ Մանուկյանի նման կերպարների կարիքն ավելի ակնհայտ է դառնում՝ նրա բովանդակ գործունեության, ազգային-ազատագրական շարժման, Հայաստանի Առաջին հանրապետության ստեղծման եւ ժամանակի մյուս կարեւոր իրադարձությունների համատեքստում: Նա իր օրինակով ցույց տվեց, որ ազգային արժեքներին անկեղծորեն նվիրվելու, սեփական ուժերին ապավինելու, հաստատակամություն ու վճռականություն ցուցաբերելու, հավասարակշիռ ու անշահախնդիր գործելու կենսակերպով ժողովրդից չտարբերվելու դեպքում՝ մեր պետական այրերը, հասարակական-քաղաքական գործիչները կարող են կերտել մեր երազած՝ ազատ, անկախ ու միացյալ հայրենիքը:

«Մենք մենակ ենք եւ պետք է ապավինենք միայն մեր ուժերին՝ թե ճակատը պաշտպանելու, թե երկրի ներսում կարգ հաստատելու»:

Արամ Մանուկյան

Հուշ Արամի մասին

Պատմում են, որ Թիֆլիսում Ազգային Խորհուրդը, ցանկանալով պարզել, թե ինչ գործունեություն է ծավալել Արամը Երեւանում, Ալեքսանդր Խատիսյանին ուղարկում է ստուգելու: Երեւան ժամանած Խատիսյանը, թվում է, թե ինչ-որ բանից խիստ դժգոհ է, եւ երբ Արամը փորձում է իմանալ պատճառը, անթերի ու կոկիկ հագնված պաշտոնյան ասում է.

- Տնաշեն, ո՞նց եք յոլա գնում այս անդրջրհեղեղյան պայմաններում. կոյուղի չկա: Լուրջ, ծանրումեծ, մռայլադեմ Արամը, հանկարծ բռնկվում է քրքիջի վարակով եւ աչքերից արտասուք է հոսում:

- Նոր եմ հիշում, իսկապես չկա,- վերջապես սթափելով եւ ծանր նայելով դիմացինի աչքերին՝ ասում է Արամը,- իսկ նկատել ես, որ մարդիկ բան չեն ուտում, եւ այդ կոյուղու կարիքը համարյա չկա: Մարդիկ անոթի են առավոտից իրիկուն. ոչ միայն գաղթականները, այլեւ տեղացի հասարակ, աշխատավոր մարդիկ...Եվ գալուս օրվանից նրանք են իմ ուշքն ու միտքը: Կոյուղու բացակայությունը չեմ նկատել: Ինչ հիմարն եմ եղել...

Սիրանուշ ՍԱՐԳՍՅԱՆ

Հիշատակդ հավերժ կլինի

Երբեմն ինքդ քեզ հարց ես տալիս՝ ինչ է երջանկությունը, եւ ինքդ էլ ուզում ես քեզ հետ մենանալ, պատասխանել՝ երջանկություն է, երբ ոտքիդ տակ հայրենի ազատ, անկախ հողն է, երջանկություն է, երբ զավակներդ ու թոռներդ են քեզ շրջապատում, ունես աշխատանք եւ, վերջապես, երբ կարող ես դիմացինիդ ցավ չպատճառել ...

Իսկ ինչ է երջանկությունը մի մարդու համար, ով ողջ կյանքում ապրել է օտարության մեջ, բախվել տարբեր ազգերի ներկայացուցիչների հետ, խոսել օտար լեզվով եւ միայն միակ զավակի կորստից հետո, ոտք դնելով իր պապերի թողած հողին, հասկացել իսկական ու իրական երջանկության բովանդակությունը:

Սրտի կսկիծով ու թախիծով եմ խոսում մի մարդու մասին, ով աշխարհից հեռացավ դեռ բազում երազանքներ ու մտահղացումներ հոգում ամբարած: Նրան ոչինչ պետք չէր. ոչ անբավ հպարտություն, ոչ շռայլ գովեստի խոսքեր: Ուզում ու փափագում էր մի փոքր անկեղծություն ու իր խենթ մտքերի հասկացողություն, որ ցավոք սրտի, ոչ բոլորի մոտ էր տեսնում ու անփույթ երեխայի նման խռովում էր, խենթանում, ալեկոծվում փոթորկված ծովի նման ու ափերից դուրս հորդում: Ինչ անես, մարդիկ հո նույն խմորից չեն հունցված: Մեկը կարող է շարունակ շողոքորթել, ժպտալ, գրկել, սիրաշահել՝ անգամ չսիրած անհատականությանը, իսկ մյուսն՝ անտարբեր ու օտարոտի հայացք անգամ չձգել չսիրած մարդուն ...

Կյանքն է այդպիսին, այդպես եղել է, այդպես էլ կլինի ...

Նա եկավ իր պապերի հողը: Եկավ ոչ միայնակ, եկավ աշխարհում թանկ իր կողակցի եւ իր մեջ անէացած սիրասուն զավակի? Անիթայի հոգու հետ: Եկավ ու այդ հոգին պահ տվեց աշանցի մանչուկին ու պատանուն, պարմանուհուն ու ուսուցիչներին, որ նրանց հետ մարմին ստանա ու ապրի հավերժ ...

Երջանիկ էր նա (բառիս ամենալայն ու ամենախոր իմաստով), որ իսկապես իր լուսե աղջնակը մարմին ստացավ, ժպիտ ու հարատեւելու ունակություն:

Յուրաքանչյուր շրջանավարտի թռիչքի հետ Անիթային էր տեսնում, դպրոցի յուրաքանչյուր հաղթանակից հրճվում ու հպարտանում էր, ասես դրանից առավել երջանկություն չկար:

Ամեն հրաժեշտ մի մեծ ողբերգություն էր նրա համար: Ո՞վ ուներ օտարության մեջ՝ անգլախոս ամերիկացի՞ն, թե՞ քծնող, վարկաբեկող «բարեկամներին»: Չէ, հայրենիքը ուրիշ է, այնտեղ ազատ ես ու բախտավոր, քոնն է ե՛ւ հողը, ե՛ւ ջուրը, ե՛ւ քարը, ե՛ւ ամեն ինչ ...

Գնում էր ու սպասում նոր վերադարձի, նոր ակնկալիքների ...

Նորից ամառ կգա, նորից Աշանի վրա կշողշողա հրակարմիր արեգակը, բայց նա՝ Վաչե Հովսեփյանը, այլեւս չի գա, որովհետեւ նա էլ դարձավ հավերժի ճամփորդ, գնաց իր դստրիկի մոտ, եւ գուցե միայն հոգին նրա՝ աշանակերտ ու աշանացավ հոգին, սավառնի իր աղջկա հիշատակը հավերժացնող դպրոցի գլխավերեւում ու փորձի դառնալ նրա պահապան հրեշտակը:

Վաչե, թող հողը թեթեւ լինի քո խոցված ու դեղելացավ մարմնին: Հավատա, որ աշանցին խորը ցավով ընդունեց քո չլինելու լուրը, քանզի քո արած-թողածը Աշանում քիչ չէ ...

Լիանետա ԻՇԽԱՆՅԱՆ

Հերոսի մեծարում Ստեփանակերտում

Հունվարի 22-ի կեսօրին Ստեփանակերտի Սուրբ Հակոբ եկեղեցու բակը մարդաշատ էր: Մի քանի հազար մարդ հանաքվել էին հունվարի 19-ին Ղարաբաղա-ադրբեջանական սահմանին ադրբեջանական զինուժի իրականացրած դիվերսիոն հարձակման հետեւանքով զոհված կրտսեր սերժանտ Արմեն Հովհաննիսյանի հիշատակը հարգելու համար կազմակերպված հոգեհանգստի արարողությանը եւ մոմավառությանը:

Մոմավառությանը ներկա էին Արցախի նախագահը, գործադիր եւ օրենսդիր մարմնի ներկայացուցիչներ, քաղաքական գործիչներ, Պաշտպանության բանակի սպայական կազմը եւ պարզապես սովորական քաղաքացիներ, ովքեր եկել էին աղոթելու հերոս զինվորի հոգու հանգստության համար:

ԼՂՀ նախագահը Արմեն Հովհաննիսյանին հետմահու պարգեւատրել է «Արիության համար» մեդալով:

«Նախագահ Սահակյանը ԼՂՀ իշխանությունների եւ ժողովրդի անունից խորին ցավակցություն է հայտնել Հովհաննիսյանների ընտանիքին՝ երիտասարդ զինվորի անդառնալի կորստի կապակցությամբ: Երկրի ղեկավարի խոսքով՝ Արմեն Հովհաննիսյանը եւ նրա մարտական ընկերները ցույց տվեցին հայրենիքին անմնացորդ նվիրվածության եւ ռազմարվեստին գերազանց տիրապետելու փայլուն օրինակ՝ եւս մեկ անգամ ապացուցելով, որ Արցախի Հանրապետության զինված ուժերն ի վիճակի են կասեցնել թշնամու կողմից ագրեսիայի ցանկացած դրսեւորում:

Նախագահ Սահակյանն Ադրբեջանի պահվածքը համարել է խիստ ապակառուցողական ու ահաբեկչական եւ ընդգծել, որ այն մեծ հարված է հասցնում տարածաշրջանում կայունության ու խաղաղության պահպանմանը եւ ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված միջազգային հանրության ջանքերին:

ԼՂՀ Ազգային ժողովի «Դաշնակցություն» խմբակցության պատգամավոր Կամո Բարսեղյանի հավաստմամբ՝ յուրաքանչյուր հայ զինվոր նման իրավիճակում պարտավոր է իրեն դրսեւորել այնպես, ինչպես մեր սուրբ նահատակն է վարվել. «Իմ համոզմամբ, այսօր այս մարդիկ, ովքեր եկել են մասնակցելու Արմեն Հովհաննիսյանի հիշատակի համար կազմակերպված մոմավառությանը եւ հոգեհանգստի արարողությանը, նրանցից յուրաքանչյուրի մոտ արթնանում է բարոյական զարթոնք, պատասխանատվության զգացում, ինչպես նաեւ՝ հայրենասիրական մղումներ: Տա Աստված, որ մեր բոլոր զինվորները նման իրավիճակում կարողանան մեր հերոս զինվորի նման վարվել»:

Արտակ Արզումանյանը, ով նոր է զորացրվել ծառայությունից, մոմավառության էր եկել իր ընկերների հետ. «Եկել ենք, որպեսզի մեր խորին ցավակցությունը հայտնենք Արմենի ընտանիքին, հարազատներին: Նրանց հետ միասին մենք էլ ենք սգում նրա կորուստը: Ինքս ծառայել եմ բանակում եւ շատ մեծ ցավ եմ ապրում կատարվածի համար»:

Աստղիկ Բաբայանի խոսքերով՝ մենք պետք է կարողանանք բանակում այնպիսի բարոյահոգեբանական իրավիճակ ստեղծել, որ մեր մեկ զինվորի դիմաց հակառակորդը 10 զինվորով հատուցի. «Կարծում եմ, որ պետք է պարգեւատրվի ոչ միայն Արմենը, այլ նաեւ պետք է հանրությանը ներկայացնեն Արմենի կողքին կանգնած այն 9 զինվորների անունները, ովքեր պետք է արժանանան պետական պարգեւների, ինչպես նաեւ պետք է ծրագրվի եւ գործադրվի համապատասխան վրիժառու գործողություն, որոնք պետք է հանրության սեփականությունը դառնան եւ այդ գործողության մասնակիցներն արժանանան բարձրագույն պարգեւների»:

«Բոլորովին վերջերս եմ ավարտել ժամկետային զինծառայությունս: Ես չեմ հասկանում մեր պաշտոնական հայտարարությունները, որտեղ նման գործողությունները որակվում են որպես սադրանք,- նշեց Համլետ Մխիթարյանը: - Սա պատերազմ է: Իսկ նման գործողությունները պատերազմական պայմաններում համարժեք պատասխան են ստանում: Սադրանք բառի բառարանային իմաստը որեւէ վատ գործի դրդելն է, սակայն ներկա իրավիճակում համարժեք կեցվածք ցուցաբերելը ոչ թե թշնամու դրդմամբ պետք է իրականացվի, այլ դա պետք է լինի մեր կողմից բնական հակազդեցություն, դեռ ավելին՝ նման իրողությունների կանխման հիմնական երաշխիքը մեր կարծր եւ նախահարձակ կեցվածքը կարող է լինել»:

Հ. Գ.

Բանակի օրվա առթիվ հայրենիքի սահմանների պաշտպանության գործում ցուցաբերած բացառիկ խիզախության եւ անձնական արիության, մասնագիտական բարձր պատրաստվածության, կյանքին սպառնացող վտանգի պայմաններում ծառայողական պարտքը կատարելիս ցուցաբերած անձնվիրության համար, Արցախի եւ Ադրբեջանի զորքերի շփման գծի հյուսիս-արեւելյան ուղղությամբ ս. թ. հունվարի 19-ի լույս 20-ի գիշերը հակառակորդի դիվերսիոն խմբերի ներթափանցման փորձը փոքրաթիվ ուժերով կասեցրած եւ հակառակորդին հետ մղած զորամասի զինծառայողները ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով պարգեւատրվել են պետական բարձր պարգեւներով.

«Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով՝ Արմեն Լեւոնի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ թիվ 49971 զորամասի ջոկի հրամանատար, կրտսեր սերժանտ (հետմահու),

Արիության մեդալով՝ Սարգիս Պապիկի ԹԱՆԱՆՅԱՆԻՆ թիվ 49971 զորամասի դասակի հրամանատար, ավագ լեյտենանտ Արսեն Աշոտի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ- թիվ 49971 զորամասի շարքային,

Մարտական ծառայության մեդալով՝ Արթուր Վանիկի ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ- թիվ 38401 զորամասի շարքային, Նորայր Վարդանի ՄԿՐՏՉՅԱՆԻՆ- թիվ 49971 զորամասի շարքային, Սամվել Արտավազդի ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ- թիվ 38401 զորամասի ջոկի հրամանատար, կրտսեր սերժանտ Լյուդվիգ Խաչատուրի ՍԵՐՈԲՅԱՆԻՆ- թիվ 38401 զորամասի դասակի հրամանատար, ավագ լեյտենանտ:

Հայկական բանակի կազմավորման 22-րդ տարեդարձի կապակցությամբ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը ադրբեջանական դիվորսիոն խմբի դեմ օրերս քաջարի մարտ վարած ու հարձակումը կասեցրած զինծառայողներին ու նրանց հրամանատարին պարգեւատրել է «Գարեգին Նժդեհ» մեդալով: Պարգեւատրվել է 10 անձ՝ դասակի հրամանատար Արման Հովհաննիսյանը, մայոր Մնացական Ավագյանը, շարքայիններ Էդիկ Դադամյանը, Մխիթար Վարդանյանը, Դավիթ Իսրայելյանը, նռնակաձիգ Սասուն Հակոբյանը, գնդացրորդ Հրայր Համբարյանը, ավագ հրաձիգ Ռաֆայել Ավդալյանը, նռնակաձիգ Արսեն Հարությունյանը, հետախույզներ Արտակ Շիրվանյանը եւ Արթուր Օհանյանը:

Անի ԱՉԱՏՅԱՆ

Ես նման եմ աղավնու այս հասարակության մեջ. Հրանտ Դինք



Հունվարի 19-ին լրացել է նշանավոր պոլսահայ լրագրող, Թուրքիայում հայերեն եւ թուրքերեն լեզուներով տպագրվող միակ ամսաթերթի՝ «Ակոսի» գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի մահվան յոթերորդ տարելիցը:

Նա Թուրքիայի երեւելի մտավորականներից մեկն էր. հայտնի էր իր անվախ ելույթներով, քաղաքական ամենախճճված խնդիրները մեկնաբանող համարձակ հոդվածներով:

Հրանտ Դինքը ծնվել է Մալաթիայում, 1954 թվականի սեպտեմբերի 15-ին: 1961 թվականին նրա ծնողները Ստամբուլ տեղափոխվելուց հետո բաժանվեցին, որի հետեւանքով Հրանտը եւ 2 եղբայրները տեղավորվեցին Ստամբուլի Գեդիկփաշայի մանկատանը:

1996-ին Ստամբուլում հիմնադրել է «Ակոս» թերթը, որը տպագրվում էր ընդամենը 1800 տպաքանակով՝ նպատակ ունենալով բարձրացնել Թուրքիայում ժողովրդավորության եւ ազգային փոքրամասնությունների իրավունքների ոտնահարման խնդիրները, բարելավել հայկական համայնքի եւ թուրք հասարակության հարաբերությունները: Հարկ է նշել, որ 2004 թվականի փետրվարի 24-ին տպագրվեց «Ակոսի» ամենաազդեցիկ հոդվածներից մեկը, որը փաստում էր, որ Թուրքիայի առաջին կին օդաչուն՝ Սաբինա Գյոքսենը, իրականում հայ է եղել: Նա հայ որբերից է եղել, որոնք որդեգրվել են 1915 թվականից հետո. նրան որդեգրել էր Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը: Դրանից հետո Դինքը պարբերաբար ենթարկվում էր սպառնալիքների, հետապնդումների թուրք ազգայնականների կողմից: Հաճախակի էր հարկադրված լինում այցելել ոստիկանական բաժանմունքներ: Դինքը Թուրքիայում բարձրացնում էր Հայկական հարցը, Հայոց ցեղասպանության ընդունման անհրաժեշտությունը, որը կնպաստեր հայ-թուրքական երկխոսությանը, միեւնույն ժամանակ հրաժարվում էր լքել Թուրքիան՝ կրկնելով, որ հայ է, բայց ծնվել է Թուրքիայում, ու նաեւ թուրք հասարակության մի մասիկ է եւ չի ցանկանում փախչել:

«Երջանիկ է նա, ով իրեն թուրք է անվանում» նշանաբանին դեմ դուրս գալով՝ Դինքը դատապարտվեց սահմանադրության 301 հոդվածով: Սա էր Թուրքիայի ամենագլխավոր նշանաբանը, որը նույնիսկ դպրոցականներին էին ստիպում սերտել:

Իր վերջին հոդվածում Դինքը գրում է.

«Ես նման եմ աղավնու այս հասարակության մեջ, որը պետք է շատ աչալուրջ լինի, ուստի ես ճարպկորեն պտտում եմ գլուխս աջ ու ձախ, վերեւ ու ներքեւ, որքան հնարավոր է արագ, որ խուսափեմ շուրջս առկա վտանգներից, բայց ես չեմ սարսափում, քանի որ այս հասարակության մեջ աղավնիներին չեն կրակում»:

Նա այն հայ մտավորականներից էր, ով, չնայած նրան, որ իր ամբողջ կյանքի ընթացքում սպառնալիքներ էր ստանում Թուրքիայում գործող ազգայնական խմբավորումներից, միեւնույն է՝ մնում էր հանգիստ: Նա միշտ իր մտահոգություններն էր հայտնում թուրքերի եւ հայերի միջեւ լարված հարաբերությունների վերաբերյալ՝ ելույթ ունենալով մի շարք ժողովրդավարական հարթակներում:

«Կան թուրքեր, ովքեր չեն ընդունում, որ իրենց նախնիները ցեղասպանություն են գործել: Սակայն, եթե նայենք, կհասկանանք, որ այդ մարդիկ ուղղակի բարի ու հաճելի մարդկանց տպավորություն են թողնում... Բայց, ամեն դեպքում ինչո՞ւ նրանք չեն կարողանում ընդունել ցեղասպանությունը: Որովհետեւ նրանք կարծում են, որ ցեղասպանությունը վատ բան է, որ նրանք երբեք չէին ցանկանա անել դա, եւ այդ իսկ պատճառով նրանք չեն կարող հավատալ, որ իրենց նախնիները կարող էին կատարել նման բան,- նշում էր նա»:

Դինքը սպանվել է 2007 թվականի հունվարի 19-ին, Շիշլիում գտնվող «Ակոս» խմբագրատան առաջ, հետեւից գլխին արձակված երեք հրազենային կրակոցներից: Մարդասպանը հեռանալուց գոչել էր «գյավուր», ինչը ենթադրելու հիմք է տալիս, որ սպանությունը կատարվել է ազգային հողի վրա: Սպանությունն իրականացնելու կասկածանքով թրքական Սամսուն քաղաքի ավտոկայանում ոստիկանությունը ձերբակալել է տասնյոթամյա Օգյուն Սամաստին, որն առաջին իսկ հարցաքննության ընթացքում խոստովանել է իր մեղքը:

Կասկածյալի հետքի վրա դուրս գալուն օգնել է նրա հայրը, ով մարդասպանի լուսանկարում ճանաչել էր իր որդուն: Լուսանկարը ստացվել էր սպանության վայրում գտնվող դիտարկման տեսախցիկի միջոցով, որն այդ պահին արձանագրել է փողոցի անցուդարձը:

Որոշ քաղաքագետների կարծիքով՝ սպանությունը ծրագրված եւ իրականացված է Թուրքիայում ազգային անհանդուրժողականության խնդիրը խորացնելու, ներքին իրադրությունը սրելու, միջազգային ասպարեզում երկրի հեղինակությունը խարխլելու նպատակով:

Հրանտ Դինքի սպանության կազմակերպման մեջ մեղադրվում է «Էրգենեկոն» ազգայնական կազմակերպությունը:

Թուրքիայի, Հայաստանի, եվրոպական երկրների ու ԱՄՆ տարբեր բարձրաստիճան պաշտոնյաներ, քաղաքական գործիչներ, մտավորականներ ու հասարակական կազմակերպություններ խստորեն դատապարտել են կատարված ոճրագործությունը, ցավակցություն հայտնել սպանվածի հարազատներին, ընկերներին ու գործընկերներին, Պոլսո հայ համայնքին: Թուրքիայի, Հայաստանի եւ աշխարհի այլ երկրների բազմաթիվ քաղաքներում կազմակերպվել են բազմահազարանոց բողոքի ցույցեր եւ սգո երթեր:

2007 թ. հունիսին հետմահու ՀՀ նախագահի մրցանակ է շնորհվել Հրանտ Դինքին: Նույն թվականին ստեղծվել է Հրանտ Դինքի անվան միջազգային հիմնադրամ, որի ջանքերով լույս է ընծայվել նրա «Երկու հարեւան ժողովուրդներ» գիրքը: Դինքի անունով Ֆրանսիայի Մարսել քաղաքում կոչվել է փողոց, իսկ Փարիզում՝ դպրոց:

Իր մասին Դինքը գրել է.

«Իմ զբաղեցրած դիրքն այսպես է բնութագրվում՝ ես երկու ինքնության եւ երկու գիտակցության կրող եմ: Առաջինը՝ թուրքաբնակ եմ, Թուրքիայի հանրապետության քաղաքացի... Երկրորդը՝ հայ եմ: Բացի այն, որ Թուրքիայի հայ համայնքի մասնիկն եմ, միեւնույն ժամանակ էլ բարոյապես հանդիսանում եմ Հայաստանի եւ հայկական սփյուռքի մասնիկը, ցեղակիցն եմ այդ մարդկանց: Այս ամենով հանդերձ՝ եթե ոմանք գեթ մի պատճառ ունեն ձգտելու հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը, ապա իմ պատճառները առնվազն երկու անգամ ավելի են: Իմ որ ինքնությամբ ուզում եք՝ ինձ ուսումնասիրե՛ք. ոչ մի տարբերություն»:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Մի՛ մոռացեք...

Յակովին բոլորը գիտեն: Նրան ճանաչում են ոչ միայն հայրենի Մեծ Թաղեր գյուղում, այլեւ շրջանում ու ողջ հանրապետությունում: Արցախյան շարժման ակտիվիստներից է, «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանակիր:

Առաջին կարգի հաշմանդամ է: Այո, առաջին կարգի հաշմանդամ. երկու ոտքը չկա, բայց այսօր էլ չի կորցրել ոգու կորովը, քարշ չի գալիս կյանքի պոչից, քանզի «գլուխ պահել» չի սիրում: Այսօր էլ մեր կողքին է, մեր շրջապատում, ապրում է գյուղի հոգսերով եւ ուրախություններով, մասնակցում հարսանեկան հանդեսներին, սգո արարողություններին:

Ծնվել է 1966 թվականին: 1983-ին ավարտել է միջնակարգը եւ նույն տարում ընդունվել Երեւանի հիդրոմելիորատիվ տեխնիկումը: Մեկ տարի սովորելուց հետո զորակոչվել է նախկին Խորհրդային Միության բանակի շարքերը, ծառայել շինգումարտակում: Զորացրվելուց հետո շարունակել է ուսումը եւ 1987թ. տեխնիկումն ավարտել գերազանցության դիպլոմով:

Հետո եկել է գյուղ, նախկին խաղողագործական սովխոզում որոշ ժամանակ աշխատել իբրեւ բանվոր, ապա դարձել չորրորդ բրիգադի բրիգադավար: 87-ի վերջերից հազար ու մի թելերով կապված էր ե՛ւ հանրային արտադրության, հայրենի հողի, ե՛ւ նոր-նոր խմորվող Ղարաբաղյան շարժման լիդերների՝ Արթուր Մկրտչյանի, Էմիլ Աբրահամյանի, Լյովա Հայրիյանի, էլի ուրիշների հետ:

1989-ին ընդունվել է Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտի տնտեսագիտական բաժինը: Չի ավարտել, պատերազմը խանգարել է: Վիրավորվելուց հետո ուսումը տեղափոխել է Արցախի պետական համալսարան, որն էլ ավարտել է 2001 թվականին:

1995-ին ամուսնացել է համագյուղացի Իննա Միրզախանյանի հետ: Հիմա երեք երեխաների հայր է: Ավագը՝ Մարիամը, սովորում է 7-րդ դասարանում, միջնեկը՝ Գրիգորին՝ 5-րդում, իսկ կրտսերը՝ Աննան, ընդամենը մեկ տարեկան է:

Շտապենք ասել, որ 89-ից դիրքերում էր: Որսորդական հրացանով հերթապահության էր գնում: Գնում էր իր բրիգադի անդամների հետ նաեւ օգնում, օժանդակում կամավորական առաջին ջոկատների ստեղծմանը: 92-ին նաեւ կամավորական վաշտի ճանաչված անդամներից էր: Նրա հետ էին Բորիկ Աբազյանը, Օլեգ Գյոզալյանը, Ռոբերտ Պողոսյանը, Խաչիկ Ասրյանը, ուրիշներ: Առաջին մարտն ընդունել է նույն թվականի հունիսի 28-ին «Կարվինի» մոտ: Այդ օրը Արթուր Բեջանյանը վիրավորվել է, Էդիկ Հայրյանը՝ զոհվել:

Հետո մասնակցել է Դրախտիկի դիրքերի ետգրավմանը, կռվել Խուռհատ կոչվող տեղամասում, Բանզուրի, Ջեբրայիլի կողմերում: Ապա դասընթացներ է անցել գեներալ Իվանյանի ստեղծած հրետանու ռազմական կենտրոնում: Նրա հետ էին համագյուղացիներ Գարիկ Դադասյանը, Էդիկ եւ Լյովա Փաթյանները եւ ուրիշներ: Ի դեպ, բոլորը ստացել են անհրաժեշտ որակավորում ու դարձել հրետանու հետախույզներ: Որպես ուղորդիչ, որպես հրետանավոր՝ աչքի է ընկել Ղաջարի, Գյումշաթաղի, Շահարլվի համար մղված թեժ մարտերում՝ թշնամուց առգրավելով երկու թնդանոթ, զենքի այլ տեսակներ: Դա եղել է 1993-ի ապրիլի հինգին, վեցին:

Նույն տարվա օգոստոսին Յակովին, իբրեւ փորձառու մարտիկ-ուղորդիչի, կանչել են Հադրութ: Նրան եւ Արմեն Աբրահամյանին, Դավիթ Մուխանյանին, Էդիկ Փաթյանին կարեւոր առաջադրանք է տրվել՝ հայտնաբերել թշնամու կրակակետերն ու դիրքերը:

Օգոստոսի 16-ին տղաների հետ բարձրացել է «Խուռհատի թումբը», տեղադրել անհրաժեշտ սարքավորումները, կապի միջոցները, ամեն ինչ բերել մարտական պատրաստության վիճակի՝ հակառակորդին շշմեցուցիչ հարված հասցնելու համար: Սակայն օգոստոսի 18-ին, առավոտյան ժամը 6-ին տեղի է ունեցել անսպասելի, անկանխատեսելի, սարսափելի դեպքը: Ետգրավված դիրքում, ականի պայթյունից մի քանի տեղից Յակովը ծանր վիրավորվել է: Անասելի ծանր վիճակում հասցրել են Հադրութ, որտեղ վիրահատել են երկու ոտքը՝ ծնկից վերեւ: Նույն օրը ուղղաթիռով տեղափոխել են Երեւան: Այստեղ ավելի քան տասը ամիս բուժվել է, այնուհետեւ կատարել են ոտքերի պրոթեզավորում՝ նոր շունչ ու կենդանություն տալով ազատամարտիկին:

Արցախի, մայր հողի, մարտական ընկերների ու ծնողների կարոտով ապրող զինվորը ամիսներ հետո տուն է դարձել՝ վերքերը դեռ լրիվ չսպիացած, բայց հույսը, հաղթանակի հավատը դեռ հոգու խորքում ամուր պահած:

Ու նա տեսավ այդ հաղթանակը: Տեսավ եւ ուրախացավ, հպարտացավ, քանզի ինքն էլ բաժին ուներ հաղթանակի ձեռքբերման, կոփման գործում:

Իբրեւ հավելում այս ամենի՝ շեշտենք, որ այս տեղեկությունները, թեւ խոսուն են, բայց, թերեւս, լրիվ չեն բնութագրում Յակովին: Վերջինիս մասին կարելի է խոսել օրերով:

Ճիշտ է՝ գովեստի, դրվատանքի խոսք շատ է ասվել, բայց... դեռ պիտի ասվի: Շատ պիտի ասվի, քանի որ նա, իրոք, հերոսական ուղի է անցել: Եվ, ամենեւին պատահական չէ, որ գյուղում մեծ թե փոքր, առավել եւս՝ երիտասարդները, հարգում, սիրում, ընդունում են նրան: Թեւ նա քայլել չի կարողանում, բայց, մի զարմացեք, պարում է: Պարում է հարսանիքներում, ջահելների թեւերի վրա: Ի դեպ, Յակովի հարսանիքի օրը ամբողջ գյուղը ոտքի վրա է եղել, ոգեւորության, ցնծության մեջ:

Այնքան կենսուրախ, կենսախինդ, մեծ սրտի ու կամքի տեր մարդ է մեզ համար այնքան սովորական, հասարակ դարձած Յակով Ալթունյանը, մեր նախկին սաներից մեկը, գյուղի խելոք, բանիմաց ջահելներից մեկը:

Հիշեցնեմ, որ հրամանատարությունը այսօր էր նրան գնահատում է ըստ արժանվույն: Ամեն անգամ, երբ գյուղ է գալիս պաշտպանության նախկին փոխնախարար, համագյուղացի, գեներալ-լեյտենանտ Արթուր Աղաբեկյանը (Յակովը կռվել է նրա հրամանատարության ներքո), հետաքրքրվում, հարկ եղած դեպքում՝ օգնում, աջակցում է:

Չզարմանաք, եթե ասեմ, որ մի օր անգամ Յակովը պարապ չի նստում: Սովորություն չունի: Իր հանգիստը նա աշխատանքի մեջ է տեսնում: Օրը բացվում է թե չէ՝ նա իր «Սենասի» ղեկին է (կառավարումը ձեռքով է): Կատակ բան չէ՝ տնտեսություն է վարում, հազար ու մի գործ անում: Հիմա կասեք՝ ինչպես: Բարեկամները, ընկերները օգնում են: Ինքն էլ պարտքի տակ չի մնում: Ավելին. մեկ-մեկ սատար է կանգնում Երեւանում ապրող ավագ եղբորը՝ Վաղոյին, օգնության ձեռք մեկնում հինգ քույրերին, որոնք բոլորն էլ իրենց ընտանիքներն ունեն, իրենց հայկական օջախները: Օգնում, աջակցում է՝ ինչով կարողանում է. Թեկուզ՝ մի բարի խոսքով, խորհրդով՝ միշտ հիշելով մոր խրատը, մոր վերջին խորհուրդ-պատգամը.

«Իմացեք, հա, օջախի զորությունը, օջախի ամրությունը քույր ու եղբայրների, հարազատների, բարեկամների սերության մեջ է...»

Յակովը չի մոռանում հանգուցյալ մոր՝ Պուժժի խոսքը: Չի մոռանում, եւ տոնական օրերին, իրենց մեծ գերդաստանի համար հիշարժան օրերին, ամեն պատեհ առիթով եղբայրներով ու քույրերով, հարազատներով (նշեմ, որ հայրը՝ Գրիգորն էլ, վերջերս է մահացել) նշում են սեղանի շուրջ, զրուցում, ասում, խոսում, ուտում, խմում, վերհիշում այն ահավոր օրերը, պլաններ կազմում, ծրագրեր մշակում: Իսկ երբ քույրերից մեկը նայում է նրա հատված ոտքերին, խորը ախ քաշում, հառաչում ու բոլորից աննկատ թաշտինակը սեղմում աչքերին, Յակովը փոքր-ինչ հուզված, մի քիչ էլ վրդովված՝ ասում է. «Հայրենի հողի համար, հայրենի ջրի համար հազարավոր հայորդիներ զրկվել են ոչ միայն ոտքից, այլեւ կյանքից... Այս ամենը մի մոռացեք ու փառք տվեք Տիրոջը, որ ողջ եմ մնացել»:

Այսպես է դատում, այսպես է իր ցավը, անբուժելի վերքը մեղմում ու քույրերի, մտերիմների, տնեցիների դեմքից տխրությունը վանում տակավին երիտասարդ (45-ը նոր է բոլորել) Յակով Ալթունյանը, որին, կարծում եմ, շատ են պատշաճում մեծ հայրենասեր ու հայրենապաշտ, զորավար Գարեգին Նժդեհի խորիմաստ բառերը.

«Քաջի ամենագեղեցիկ զարդը կռվի դաշտում ստացած վերքն է»:

Միքայել ԲԱԼՅԱՆ

ՑԱՎԱԿՑԱԿԱՆ

Կուսակցական ընկեր Դավիթ Առստամյանի կնոջ մահվան կապակցությամբ՝ ՀՅԴ Արցախի ԿԿ-ն, Արցախի կառույցի կողմից ցավակցում է ընկեր Դավիթ Առստամյանին, ընտանիքին եւ հարազատներին:

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանց 17,
հեռ. 97 38 43, E-mail: info@aparaj.am
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում: Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում: Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 500: Գինը՝ 100 դրամ:

Խմբագիր Սեւակ ԽԱՉԱՏՐՅԱՆ